

17747

Историческая география

891.99

4-15

1913

2003

257

№ 4 «ՀՈՐ ՀՈՍԱՆՔԻ» ԳՐԱԴԱՐԱՆ № 4 55


~~891.542-2  
4-15~~

Վ. ՎԱՆԱԳՆԱՆ

891.99  
4-15

# ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ

ԳՐԱՄԱ 4 ԳՈՐՆՈՂՈՒԹԱՄԲ



Թիֆլիս

1913

891.542-2


Գ-15

uv

Վ. ՎԱԼԱԳԵԱՆ

# ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ

ԳՐԱԿԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



ԹԻՒՆԻԶ  
Տպարան Ա. Մ. Կերեսի լիճէի, Գարաբաղի 1.  
1913

Handwritten signature or name in blue ink.

Handwritten number '100-20' in blue ink.



1457-89  
81891-154

1808  
35724

Настоящая пьеса на армянскомъ языкѣ, подъ заглавіемъ „НАСЛѢДСТВО“, соч. В. Валадяна, разрѣшена Намѣстникомъ Его Императорскаго Величества на Кавказѣ для представленія на сценахъ края. (Отзывъ канцеляріи за № 19101—912 г.) 3 сентября 1912 г. гор. Тифлисъ.

*П. д. Предсѣдателя Комитета Гроздовъ*

«Ժառանգութիւն» պիէսան ներկայացնելու համար՝ պէտք է կանխապէս իրաւունք անել հեղինակից: Իմուններն ուղղել այս հասցէով.

Тифлисъ, редакція газеты „Оризонъ“. В. Валадяну.

Начальник штаба армейского округа, полковник  
Александр Иванович Беляев, командир  
полка, капитан (с 1912 г.).  
С 1912 г. по 1913 г. командир  
полка, капитан.

С 1913 г. по 1914 г. командир  
полка, капитан.  
С 1914 г. по 1915 г. командир  
полка, капитан.

С 1915 г. по 1916 г. командир  
полка, капитан.

С 1916 г. по 1917 г. командир  
полка, капитан.

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

1. Պետոս Զարգայեան, ծխական դպրոցի աւագ-ուսուցիչ:
2. Նդիսաբէր, կենը:
3. Մանէկ
4. Ռաֆայէլ } որդիքը:
5. Սարիբէգ, գիւղի տակարական, Նդիսաբէթի եղբայրը:
6. Առուշան, սրտ տղան, գիմնագիտ:
7. Բժիշկ:

Երկու փոքրիկ սենեակ՝ իրար կից. ձախ կողմինը՝ Պե-  
տրոսի առանձնասենեակն է, իսկ աջ կողմինը՝ ընդհանուր  
սենեակը: Պետրոսի առանձնասենեակն ունի մի պատուհան՝  
դէպի բակը և մի դուռ՝ դէպի միւս սենեակը: Պատերը ծած-  
կւած են զանազան մեծ ու փոքր նկարներով, վերցրւած  
մեծ մասամբ պարբերական հանդէսներէց, և քարտէզներով:  
Այստեղ այնտեղ հասարակ դարակներ կան շինւած՝ լիքը  
գրքերով, մանաւանդ հին ամսագրերով ու լրագիրներով:  
Մի պահարան՝ նոյնպէս գրքերով ու թղթերով լեցուն: Մի  
սեղան, որը ծածկւած է մաշկով, թանաքոտած կանաչ մա-  
հուղով. վրան դրւած են գրքեր, տետրակներ և շատ ուրիշ  
տեսակ-տեսակ իրեր: Սեղանի առաջ՝ մի լայն կաշեպատ  
բազկաթոռ: Աջակողմի անկիւնում՝ երկաթեայ, մահճակալ:  
Պատուհանի մօտ, պատից կախւած է ժամացոյց: Մի քանի  
աթոռ: Միւս սենեակը ունի երկու դուռ, մէկը՝ խորքում՝  
դէպի խոհանոց, միւսը՝ աջակողմում՝ դէպի փողոց: Մի  
թախտ, հին ձևի, կարպետով ու մութաքաներով: Մի ծալո-  
վի ճաշասեղան: Մի հին դիվան: Դիվանի վերևի պատից  
կախւած է մի հայելի: Մի կամօղ. վրան զանազան իրեր:  
Սոհանոցի դռան մօտ՝ մի հասարակ, ցածրիկ պահարան՝  
ամանեղէնի համար: Թախտի կողմի անկիւնում՝ կլոր սեղան  
որի վրայ դրւած է նարդի: Միւս անկիւնում՝ Առուշանի  
գրասեղանը:

Իդորը գործողութիւններում՝ միևնոյն սենեակ-  
ները:

## Ը. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Ճաշայ ժամն է: Դուրսը յունիսեան օթեղանակ է:  
Պատուհաններն ու դռները լայն բաց են արւած:

Վարագոյրը բարձրանալիս, ԵՂԻՍԱԲԷԹՆ ու ՌԱՅԱՅ-  
ԷԼԸ ճաշասեղանը քաշ են տալիս դիվանի առաջ և բացում  
նրա մի թևը: Ապա, ԵՂԻՍԱԲԷԹԸ փոռոցն է ձգում և պա-  
հարանից ամաններ հանում ու բերում-դարսում սեղանի վը-  
րայ: Նա յոգնել է. քրանած է: ԵՂԻՍԱԲԷԹԸ՝ 40 տարին  
անցրած, կարճ հասակով դէր կին է. դէմքը, կլոր, շատ աշ-  
խատանքից մաշւած: Դայլւածքը, ձայնը, աչքերը՝ բարու-  
թիւն են արտայայտում: Նրան անդործ տեսնել չի կարելի—  
համարեա միշտ որևէ աշխատանք ունի ձեռքին: — Իսկ ՌԱ-  
ՅԱՅԷԼԸ թէք է ընկնում թախտի վրայ: Տրամադրութիւնը  
լաւ չէ: Մի հարց զբաղեցնում է նրան, բայց նա չի կարո-  
ղանում իր մտքերը կենտրոնացնել այդ հարցի վրայ: ՌԱ-  
ՅԱՅԷԼԸ՝ 20 տարեկան է. միջահասակ, նիհար, մազերը սև,  
խնամքով դէպի կողք սանրւած: Դժարութեամբ բուսած բե-  
ղեր: Շարժումները՝ մերթ անհամարձակ, մերթ արհեստա-  
կանօրէն վճռական: Աչքի է ընկնում՝ բոնազրօսիկ ինքնա-  
հաւանութիւնը և օրիգինալ երևալու ցանկութիւնը: Սակայն,  
նա չունի ոչ որևէ ուրոյն բնաւորագիծ, ոչ էլ կամք: Թու-  
լութիւնը արտայայտում է նրա ձայնի մէջ, նաև դժարու-  
թիւններից խուսափող արամադրութեան մէջ: Սօսելիս մէկ-  
մէկ կակազում է և շարունակ ձեռքերը աննպատակ շար-  
ժում: — Հագուստը նոր է. կապոյտ օտլայած շապիկ. լայն  
գօտի. սպիտակ բաճկոն. փայլուն կօշիկներ. դունաւոր թաշ-  
կինակ:

ԵՂԻՍԱԲԷԹ (խսելով) Օ՛ֆ, կարծես կրակ է թափւում

երկնքից... (գոգնցող հովհարում է իրեն:) Էս տարի էլ  
չենք արժանանայ՝ ամառը մի տեղ գնալու... (նայում է  
Ռաֆայելի կողմը:) Հէրիք միտք անես, Ռաֆայէլ: Ախր ին-  
չո՞ւ ես էգբան միտք անում... (շարունակում է հովհարել:)

ՌԱՖԱՅԷԼ (ներքին վերոյմուտքից՝ քերել փնչոց է ար-  
նակում:)

ԵՂԻՍԱԲԷԹ Մի մտածի... Աստուած ողորմած է...

ՌԱՖԱՅԷԼ Համբերութիւն չի մնում... Մէկ օր չի, մի  
շաբաթ չի, մի ամիս չի— հինգ ամիսը լքանում է...

ԵՂԻՍ. Էսքան սպասել ես, որդի, էլի սպասիր:

ՌԱՖ. Ինչպէ՞ս սպասեմ, մայրիկ. հայրս քանի գնում՝  
խելքը կորցնում է:

ԵՂԻՍ. Որդին հօր մասին էգպէս խօսք չպէտքէ ասի,  
որդի:

ՌԱՖ. Կոկորդս է հասել, մայրիկ, այ կոկորդս: Սօմ  
դու ինքդ էլ ասում ես քո բերանով, որ հայրիկի արար-  
մունքը լաւ արարմունք չէ... (քերել պառկա) Այսքան  
պարտք ունիմ, վերջը պէտք է վճարե՞մ թէ չէ...

ԵՂԻՍ. (Տխուր շարժում է գլուխը:)

ՌԱՖ. (Վայելեկնապես բռնկում է և վեր կենում՝ ձեռ-  
ները բարկութիւնից շարժելով:) Քրիստոս վկայ՝ հետը կռիւ  
կանեմ: Ախր այսպէս ապրել չի կարելի: Մարդ եմ, ընկեր-  
ներ ունեմ... Սօմ էլ աշակերտ չեմ... փո՞ղ տէք՝ գնամ Մասկ-  
ւա. ի՞նչ ունեմ այս հոտած տեղում... Հօրս լսեմ ու գնամ  
ժառայութեան մտնեմ... հա՛ ինչպէ՞ս չէ: .. (Մի փոքր լուռ  
է: Բարկութիւնն անցել է:) Անունն էլ է չլինէր՝ Չհաննամը.  
Թէ չէ ամենքը հիմա ինձ փողաւորի տեղ են դնում: Հայրս  
ժառանգութիւն է ստացել, կարծում են՝ գրողաններս լցւել  
են դրանից... Քանի՞ն են ասել՝ «փողի կէսը խօմ քանն է»:  
Ի՞նչ է... Ո՞ր մէկ ասողին հասկացնեմ, թէ հայրս այդ փո-  
ղից մի կոպէկ էլ չի տալիս:

ԵՂԻՍ. Կը տայ, որդի: Փողերը ձերն են ու ձերը: Հե-  
տը գերեզման խօմ չի տանի:

ՌԱՖ. (Կակղած) Ո՞վ է իմանում... Նա ինչ որ՝ մի ու-  
րիշ տեսակ հայր է... (նորից է բռնկում, բայց աւելի քե-

րել) Հը՛, Մանէլը գրում է (ձոցից նստակ է հանում) — ան-  
պատճառ խօսիր հայրիկի հետ, մանրամասն իմացիր՝ նրա  
մտքում ի՞նչ կայ: Ես ինչպէ՞ս իմանամ ի՞նչ կայ: Ինքը աւե-  
լի կիմանայ. թող գայ ու հարցնի: Գրում է՝ եթէ  
հարկաւոր լինի, հեռագիր տուր՝ իսկոյն կը գամ: Մանէլն  
էլ, խօմ գիտես, կը գայ՝ կռիւ կը սարքի:

ԵՂԻՍ. Ո՞նց անեմ, որդի ջան, ես որ ջուրն ընկնեմ:

ՌԱՖ. Բեկ չեմ մեղադրում, մայրիկ, դու ի՞նչ մեղք  
ունես: Մենք մեր հօրիցն ենք անբաւական...

ԵՂԻՍ. (Աչքերն արցունքալեցում են: Օրհնւած մարդը,  
ձեր Լն բիձէն, մեռնում էր՝ էնպէս կտակ էլ է անէր, որ  
կարողութիւնը ձեզ էրկուսիդ մնար: Հօրդ ինչացո՞ւ էր էգ-  
քան փող, որ նրա անունով թողեց սաղ կարողութիւնը...

ՌԱՖ. (Իւ մտածածը շարունակելով) Յիսուսն չորս տա-  
րին անց է կացրել, հիմա է՛ փրկիտփայութիւններ անում—  
հայ կեանքը այսպէս պէտք է լինի, հայ մարդիկ այնպէս  
պէտք է ապրեն: Սօցիալիստներից պրծանք, հիմա էլ մեր  
հայրն է մեր գլխին քարոզներ կարգում...

(Մտնում է Առուշանը:)

(Առուշանը աւարտող գիտնագիտ է. դեմքը՝ ոսկոս, բայց  
էականումն. աչքերը՝ աշխարհ: Քայլածք, շարժումներ՝ զրա-  
պաւորեմ հանգիստ:)

ԵՂԻՍ. Առուշն էկաւ... (Առուշանին) Բէզարած կը լես,  
որդի, մի թեթի գաղուսկա արա... (Ներս ու դուրս անելով,  
Առուշանի համար ուսելու բան է պատրաստում հոգաւորա-  
րեամբ:)

ՌԱՖ. (Մտերմաբար) Հը՞. չորս թէ հինգ:

ԱՌՈՒՇԱՆ. (Գոն է: Գրեք գարտում է իր սեղանի վր-  
այ: չինգ:

ՌԱՖ. Բրաւօ, բրաւօ... հա-հա... (Ռաֆայելի ծիծաղ  
կարն է, անդուրեկան: Միծաղելիս նա բերանը լայն բաց է  
անում և բաց էլ պահում առժամանակ:) Ուրեմն, հիմա կա-  
րելի է ասել՝ աւարտեցիր:

ԱՌՈՒՇԱՆ. Ի հարկէ, հեշտ բաներն են մնացել. ընդհանուր պատմութիւնն ու ֆիզիկան:

ՌԱՖ. (Եղիաբեկին, որը այդ միջոցին գալիս է խոհանոցից:) Մայրիկ, Առուշը այսօր էլ հինգ է ստացել:

ԵՂԻՍ. Առուշը սովորելու օրից միշտ հինգ է ստանում: (Առուբին) Մի շուտ վերջանային էդ քննութիւնները, որ հանգստանաս, թէ չէ շատ լղարեցիր... Նստի, որդի, սոված ես, մի քիչ բան կեր. բիձէդ ու հէրդ բալբի ուշանում են: Չու կեր, պանիր կեր: Հէրդ էլ մոթալ է բերել գեղիցը: Կեր, որդի:

ԱՌ. (Նստում է եւ սկսում ուտել:)

ՌԱՖ. (Նստում է դիմացը:) Ոսկէ՞ մէդալ կը տան թէ՞ արծաթի:

ԱՌ. Ի՛նչ ուզում են՝ թող տան: Բոլորովին չտան էլ՝ չեն վշտանայ...:

ԵՂԻՍ. Մեր ազգի միջին դու էլ է ուսումնասկան դասար, փառք Աստուծոյ...

ՌԱՖ. Իեւ սպասիր, մայրիկ, Առուշը կը գնայ Պետերբուրգ, համալսարանը կաւարտի, յետոյ տե՛ս... հա-հա... յետոյ մեղ էլ լայեղ չես անի, Առուշ:

ԵՂԻՍ. Մեր տղէն է, մեր որդին է, ինչո՞ւ չպէտք է լայեղ անի: Բա ես նրան էզպէ՞ս եմ մեծացրել...

ՌԱՖ. (Անգօր նախանձ) Ես էլ... սպասէք դեռ գնամ Մասկա... (այդ գրացմունքն իսկույն անցնում է:) Միասին կերթանք, Առուշ. կուրիերսկի պօէզզով միասին եալլա՛ կանենք Մասկա. այնտեղից էլ դու կը գնաս Պետերբուրգ... համալսարան:

ԱՌ. Համալսարան: Է՛, այնքան փող որտեղից ունենմ, որ համալսարան գնամ: Տարին գոնէ հինգ-վեց հարիւր բուրլի հարկաւոր կը լինի:

ՌԱՖ. Վա՛հ:

ԱՌ. Լօբո՞ էիր կարծում. սենեակ է, ճաշ է, հագուստ է, ուսման փող է, թատրոն է, գէս է, դէն է...—մարդ եմ, գրպանումս էլ աւելորդ փող պէտք է ունենամ թէ չէ... (ճառումնակում է ուտել:)

ԵՂԻՍ. (Թախտի վրայ նստելով՝ սկսել է ինչ որ կարկասան անել:)  
Աստած ողորմած է, որդի. հալբաթ մի տեղից մի բան կը ճարւի:

ԱՌ. Առայժմ ոչինչ չկայ: Բազաքի ստիպէնդիաները բռնած են... Վնաս չկայ. մի քանի տարի ուսուցչութիւն կանեմ, թերթերում էլ կը գրեմ, փող կը հաւաքեմ ու իմ միջոցներով համալսարան կը մտնեմ:

ՌԱՖ. (Կարեկցաբար) Ուզում ես էլի գիշեր-ցերեկ աշխատել: Կը հիւանդանաս ..

ԱՌ. (Վստահ) Չեմ հիւանդանայ: Տասը տարի է սովորում եմ՝ միայն մի անգամ եմ հիւանդացել՝ զիֆտէրիտով... իմ առողջութիւնը իսկը լեռնցու առողջութիւն է: Ինձ պէս թոքեր ունեցողը՝ ոչնչից չի վախենայ: Տես (կուրծք ուսեցնում է՝ օդ ներեկելով:)

ՌԱՖ. Ե՛ս էլ կարող եմ... (ուսեցնում է կուրծք, բայց շուկը շուտ է կտրում:)  
Հա-հա-հա... Հէնց այսպէս կուրծքս դուրս քցած՝ ման կը գամ Մասկայում: Ինքս՝ սե աչքերով սիրուն տղայ. կասեն՝ КАВКАЗЕЦЬ!... Մասկա՛, Մասկա՛... Չէ, ես պէտք է անպատճառ գնամ: Բեզ էլ կը տանեմ: Հայրիկին կասեմ, որ իրա հաշով քեզ համալսարան ուղարկի: Թող իմ բաժին փողից տայ: Հէնց այսօր հայրիկին կասեմ քո մասին...

ԱՌ. Ես իմ քեռուն երբէք չեմ անհանգստացնի: (Աւտիկ վերջացրած, ծոցից քեր է նսնում ու սկսում է կարդալ:)

ՌԱՖ. Չէ, պէտք է խօսեմ... Մանէլին էլ՝ հեռագիր տամ, թող մի գնայ...

ԱՌ. Հարկաւոր չէ բռնանալ ուրիշի կամքի վրայ: Քեռին ինչ ուզում է՝ թող անի. իրա կամքն է...

ՌԱՖ. (Յոխորտակով) Հօրս կամքը գրօշ չարժէ ինձ համար... Իու չգիտե՞ս՝ որ որդիքը պէտք է սգատ լինեն. մարդկային պրօգրէսը... (կապ է րնկնում) մի խօսքով՝ հին սերունդ և նոր սերունդ... սօցիալական պրօրլէմի հիման վրայ...

ԵՂԻՍ Առւս, հէրդ գալիս է... (Իսկն կարգի բերելով՝

դանդաղ առաջ է գնում, ձեռքի աշխատանքն շարունակելով):

(Նախասենեակում լսում է Պեհրոսի հազը:)

Ա.Ռ. Տես, Ռաֆայէլ, իմ մասին ոչ մի խօսք չստես... (վեր է կենում:)

Ռ.Ս.Ֆ. Չէ պէտք է ասեմ... իմ մասին էլ պէտք է ասեմ: (Պատասխանում է խիստ խօսել հօր հետ:)

ՊԵՏՐՈՍ (Հագալով ներս է գալիս, կռնասակին՝ հասարակ պօրձակ է մի վաթեր:)

ՍԱՐԻԲԷԳ (Գալիս է նրա յետևից:)

(ՊԵՏՐՈՍԸ 55 տարեկան է, բաւական կուսակցութեամբ մէջքով կուրծքը փոքր ինչ ներս ընկած. դէմքը մաշկած. այտերի ու քթի արանքները՝ երկու խորը կնճիռներ են իջնում մինչև ծնոտները: Այդպիսի մի կնճիռ ևս՝ թաւ յօնքերի մէջտեղում: Լայն ձակատը խելացիութիւն և յամառութիւն է արտայայտում: Պոռք կապոյտ ակնոցներ: Շարժումները նեարդային են. Ուրիշի հետ խօսելիս, սովորաբար իր մըտքերով է զբաղւած լինում, թէև ուղիղ նայում է խօսակցի երեսին: Պօսում է մերթ շտապ, մերթ էլ՝ երբ զսպում է ինքզինքը՝ բաւական դանդաղ:—Հագած ունի սիւրտուկ:— ՍԱՐԻԲԷԳԸ 45 50 տարեկան: Պորամանկ, բայց և շուտ ոգևորուող: Կիսակիրթ գի. դպցի է: Շարժումները մերթ ծոյլ մերթ անգանգիստ:)

ՊԵՏՐՈՍ (Մի պահ կանգնում է եւ նայում բաց դռների ու պատուհանների կողմը:)

ՍԱՐԻԲԷԳ (Սասիկ քրտնել է: Փնչացնելով մտքում է քրտնել:)

ՊԵՏ. Եղիարէթ, փակիր պատուհանը... Չէս տեսնում՝ օդը ներս է հոսում հակառակ կողմերից: (Յոյց է արթնացնում իր սենեակի պատուհանը:)

ԵՂԻՍ. Բա էս կրակ վախար... ՊԵՏ. Փակիր, փակիր... Հէնց այսպիսի շոգ եղանակին կարելի է հեշտութեամբ մըտել... ԵՂԻՍ. Տանջւած ենք էլի՛ քո ձեռքից... (գնում է և փակում պատուհանը:)

Ռ.Ս.Ֆ. (Ուրախ ցոյց հօր դէմ, դժգոհ մի կողմ է քաշում:)

ՊԵՏ. (Նկատում է այդ: Մի վայրկեան անորոշութեան մեջ ընկնելով, դառնում է Առուշանին) Բարեւ, Առուշան... Մենք այսօր չենք տեսնուել... (խուսափողական, բայց խորհրդաւոր հայեացք է ձգում վրան: Իրար ձեռք են սեղմում:)

Ա.Ռ. Այո...

ՊԵՏ. Եւ իհարկէ՛ դարձեալ յաջող... Ես այդ բանի մէջ համոզւած եմ... (Կարծես խուսափելով նրանից՝ իր սենեակին է գնում:)

ՍԱՐԻԲԷԳ (Գանդաղ-դանդաղ նստել է քախի վրայ: Շարունակում է փնչացնել:)

Ռ.Ս.Ֆ. (Փնքփնքացնում է:)

ԵՂԻՍ. (Դուրս է եկել Պեհրոսի սենեակից: ձառի պատասխաններ է սենում:)

ՍԱՐ. Առուշ, այ տղա, վերջը ինչ պըտի դուս գաս: Բա էրբ պըտի փոսկուես...

Ռ.Ս.Ֆ. (Փրկկացնում է:)

ԵՂԻՍ. Ի՞նչ փոսկուելու վախտ է. ի՞նչ ես ասում:

Ա.Ռ. (Փպսում է: Նստում է սեղանի առաջ և բան գրում:)

ՍԱՐ. Բա դէ էն ա՛ տղամարդ ա դառել, քաննինդ տարեկան ա:

ԵՂԻՍ. Քանը հալա մէկէլ շարաթ վերջացրեց, իմ Մանւէլից մի տարի, չորս ամիս ու մի շաբթով է պատիկ:

ՍԱՐ. Դէ ես ի՞նչ իմանամ... Համ էլ բալթի թէ հարուստ տեղից ախշիկ են տալիս... Ես էլ զաթումը կը շահեմ: Թէ չէ դուքանիցս՝ էլ օգուտ չկայ: Առաջւայ օգուտը չկայ. գեղի խալին էլ ա շուն կտրել: Հիմա գեղացիք իրանք իրանց դուքան են քցում, օյինբազութիւններ են ասում. պարտքով աւնում, պարտքով ծախում են... Չէնները քցել են, թէ կոմպէրացի ենք սարքում... Ընդհանրապէս (Ծիծաղում է:)

Ռ.Ս.Ֆ. (Ծիծաղում է:)

Ա.Ռ. Ասա՛ կօօպերացիա, հայրիկ...

ՍԱՐ. Հաշիւը մին ա. շունը շանից...

ՌԱՅ. (Խիս) Կարծում ես՝ կօօպերացիան օգուտ չի ապ գիւղացիներին...

ՍԱՐ. (Վեր է կացել եւ ծանրաբայլ առաջ գալով՝ աչք է ձգում դեպի միւս սենեակը, տեսնելու համար, քե ի՞նչ է անում Պետրոսը։)

ՌԱՅ. (Անհամբեր) Ոչ դուք սխալուում էք. գիւղացիները անագին օգուտներ են ստանում։

ՍԱՐ. (Վշտի տոնով) Ստանում են, բա չէն ստանում... Մէջտեղը քնատեղը ես եմ ախր. էլ նրանց օգուտը ինչի՞նք ա պէտք... Ալլահա բնիս... (Պետրոսին շեմուտ նկատելով) է, էնպէս ժամանակ ա, որ փող ունենաս՝ ամեն բան էլ գրելու կը բերես...

ՊԵՏՐՈՍ (Ներս է գալիս։ Մինչ այդ, նա զբաղւած է եղել իր սենեակում։ Սիւրճուկը հանել՝ քերել բանկոն է հագել. կօշիկները փոխարինել է տւնիլիներով։ Պօրտօնը դրել է գրասեղանի վրայ։ Ներս գալիս բաց է անում փայտեղը։) Ես գրեցի մի նոր պատկեր... Այս սենեակում կախենք՝ աւելի յարմար է. այնպէս չէ... անն (լայն բաց է անում պատկերը։) Յիսուսի խորհրդաւոր ընթրիքը... Առուշան, նայիր՝ սքանչելի բան է... Յիսուսի դէմքը որքան խորիմաստ է... (Չորս կողմն է նայում, քե որտեղ կախի նկարը, որը ապա փորձում է յարմարացնել այստեղ-այնտեղ։)

ՍԱՐ. (Դիտմամբ հագում է։) Օվվէ, զօր շոք ա... (կամենում է ռուպէ առաջ առանձնանալ Պետրոսի հետ։)

ՊԵՏ. (Սիրով) Խորհրդաւոր ընթրիքը... Մաքուր ճըշմարտութիւնը և սե դաւաճանութիւնը կանգնած են իրար հանդէպ... բարութիւնը և չարութիւնը...

ՌԱՅ. (Առուշանին, հեզօրէն աչքով անելով հօր հասցեին) Սկսեց...

ՊԵՏ. ...Բարութիւնը յաղթում է, իսկ չարութիւնը՝ ի վերջոյ յաղթահարւում է... Այստեղ անն՝ ամենից յարմարն եմ գտնում... (նկարը յարմարացնելով զբաղւած) Եղիսաբէթ, բարի եղիր՝ ինձ երկու հատ մեխ և...

ԵՂԻՍ. (Կիւ է, որ ցածրիկ պահարանից ամաններ հա-

նի. մի քանի արիւս ընկնում են ձեռքից և աղմուկով կոտրւում։)

ՍԱՐ. Չանդ սող, բան չկայ։

ՌԱ. (Շատապով օգնում է Եղիսաբէթին՝ վեր կենալ. ապա հաւաքում է փերանքները։ Նայն է ուզում անել և Ռաֆայելը։)

ՊԵՏ. (Վախեցել է սասիկ. պատկերը վայր է ընկել ձեռքից։) Չգուշութիւն, Եղիսաբէթ, զգուշութիւն՝ ամեն քայլափոխում...

ԵՂԻՍ. (Դժգոհ ու դժարութեամբ ոտքի է կանգնում։) Դեւ էլ ու բու զգուշութիւնը... աւելի լաւ է՝ տան համար մի բուժէտ առնես. մէջքս կոտրւում է՝ ամեն անգամ կզանալուց... (Աւելի դժգոհ) Տունս տկլոր է, օրինաւոր բան չըկայ... Մի՛ քանի հարիւր մանէթ ծախսիր, այ մարդ, էղքան էլ ձեռք պինդ կը լինի։

ՊԵՏ. Ուզում ես ստել՝ ժլտո եմ... (վիրտուրւած) ոչ, ես ժլատ չեմ։

ԵՂԻՍ. Բա էնքան փողը ինչ ես ծանոյր ու բարակ բանկումը պահում...

ՊԵՏՐ. Եղիսաբէթ, երբ գողափար չունես... խնդրեմ՝ չհօքօքութիւն պահպանիր... դու գողափար չունես... դու չես իմանում...

ԵՂԻՍ. Չես իմանում, չես իմանում... էսքան սպասեցելուց՝ միւր հոգին դուրս է գալիս... իմ գլուխը ջնանամբ, էրեխերանց մասին գոնէ մտածիր... էլ էսպէս ապրելու իլաջ չի մնացել...

ՍԱՐ. (Աչքով է անում Պետրոսին, ասել ուզեցալով, քե «ուշադրութիւն մի դարձնի») Դէ կնիկարմատ ա, կը խօսի էլի...

ՊԵՏ. (Վշտացել է։ Նկարը վերցրել է գետնից։) Բայց ինչու ես այդքան վրդովուում... դու, թուում է, ջղայնացել ես...

ԵՂԻՍ. Լաւ, լաւ... դէ նստեցէք, մի քիչ զակուսկա արէք՝ մինչև չխրթմին ձու օձեմ, բերեմ... (Յուզւած գնում է խոհանոց։)

ՊԵՏ. (Վերադառնում է իր սենեակը։)

ՍԱՐ. (Յօրանցում է:)

ՌԱՅ. Կամաց, քեռի, ինձ մէքաշ չուտես... մէքաշ... հա-հա-հա...

ՍԱՐ. (Պետրոսի յետեւից գնալով) Կաշաղակի միս չեմ ուտում...

ՌԱՅ. Մէքաշ... ես կաշաղակ եմ, որ կաշաղակի միս ունենամ:

ՍԱՐ. Լեզուդ կաշաղակի պոչի պէս՝ մի գլուխ ժած ա գալիս... Փեսայ... (Ռպէս քէ անկալասակ՝ մտնում է միւս սենեակը եւ դուռը կամացուկ փակցնում:)

ՊԵՏ. (Մտախոն կանգնել է՝ նկարը ձեռքին: Սկսում է փայլել:)

ՍԱՐ. (Աստիճանաբար) Փեսայ, ախր ինձ վերջնական պատասխան չես տալիս: Մի պատասխան տուր վերջնային... զնայ...

ՊԵՏ Բայց չէ՞ որ ես արդէն պատասխանեցի... (իր մտքերի ներքին է:)

ՍԱՐ. (Նստում է սեղանի վրա): Է՛, ասում ես էլի... Արի, կարճ կտրենք, զուտով առ, պրծի... Լաւ, թէ որ դառողը չես ուզում, սիրտդ չի կպչում,—Ասլանանց Նահօյի բաղերը առ...

ՊԵՏ. (Նստում է բազկաթոռի մէջ:)

ՌԱՅ. (Սարխիբի գնալուց յետոյ, Առուեանին՝ Մէքաշ... (Երգելով՝ մի փանի անգամ կրկնում է «մէքաշ» խօսքը:—Մօտենում է նարդու սեղանին. վերցնում է նարդին: Առուշ, արի քեզ մի լաւ մարս բերեմ՝ թաթարեախնի... (աշխոյժով փառում է սեղանը դեպի պատուհանը եւ նարդու փաթեթը դարտում: Արի, նստիր: Քէֆդ քեօք պահիր, կը տեսնես, թէ ինչ օյին եմ գնելու հօրս գլխին... նստիր... պցում եմ՝ իմ Մասիկա դնալու բախտին... (նետում է գառը:)

ԱՌ. (Զբաղած) Մի յօդած եմ թարգմանում. ուրիշ անգամ:

ՌԱՅ. Դ՛հա ու քո յօդածները... վերջը՝ խմբագիր կը դառնաս... (նստում է եւ սկսում է ինքն իրեն խաղալ:)

ՍԱՐ. Մի փանի վայրկեան պատասխանի սպասելուց յետոյ: Նահօն մուշտարու մաթալ ա մնացել, էժան կը տայ:

Բայ չի, ոսկի ա: Առ, պրծի... Ա՛ փեսայ, փողերդ ժած տու, մայա քցի, էդ քսան հազարին՝ մի քսան հազար էլ վրայ բեր, տո՛ւնդ Ասաւած չքանդի...

ՊԵՏ. Սարիբէզ, դու դատում ես՝ իբրև մի իսկական խանութպան... Փողը միթէ՞ անպատճառ բազմացնելու համար է...

ՍԱՐ. (Չեւեր յուսանաւ շարժում է): Քեզանից խէր չի բերի... (գրլանակ է պատրաստում): Ես քեզ համա եմ ասում, թէ չէ ինձ ի՞նչ օգուտ. ըսկի:

ՊԵՏ. (Աւելի ինքն իրան, մտախոն) Չէ՞ որ մարդ պէտք է ապրի յաճախ բանականութեան հետեւելով և ոչ թէ նեղ բնազդին... (Աշխուժով դառնում է Սարիբէզին) Ինչո՞ւ անպատճառ փող բազմացնել. անյոք է մեր կեանքի նպատակը... Փող, փող, շարունակ փող... Ամեն մէկը իրա մասին ու փողի մասին է մտածում... իսկ ոչ ոք չի ուզում մտածել ուրիշների մասին... Մինչդեռ կան ուրիշները... անօգնական մարդիկ... տուն չունեն, հագուստ չունեն...

ՍԱՐ. (Սկսում է կատակով):

ՊԵՏ. Ո՛վ պէտք է օգնէ այդ մարդկանց... (վտայ) Փող, փող... Յանուն փողի մոռանում ենք ամեն բան: Ամեն բան: Մարդասիրական զգացմունքները կորչում են մեր հոգու միջից... Մարդը մարդին այլևս չի ուզում սիրել... խեղճ մարդիկ մենակ են մնում և անօգնական...

ՍԱՐ. Պետրոս փեսայ, հանի դուզ ստացել ես էն քսան հազարը...

ՊԵՏ. (Պարզամիտ զարմանքով նայում է երեսին). Չգիտես ինչ է. 20,000 ռ. ստացայ իմ աւագ եղբայր Պօղոսից, որպէս ժառանգութիւն...

ՍԱՐ. Նազդ ձեռիդ ա. թէ... էնպէս նիսիա բան ա:

ՊԵՏ. Ներկայումս այդ փողը պատկանում է ինձ, օրէնքով վկայած է և հաստատւած:

ՍԱՐ. Բա էլ ո՞ր ես էնպէս խօսում:

ՊԵՏ. Ինչպէս:

ՍԱՐ. Էնպէս որ՝ էլ խեղճս որն է, տկճրս որն է, Մարդ քսանհազար մանկթ նազդ փող չունայ՝ ու էդպէս

Handwritten notes and numbers: 89, 175, 35724



բաների մասին մտածի... Ալլահա բնի... Զաւոզն էլ առ,  
Նահօյի բաղերն էլ առ, սուրու-սուրու օջիսար սո... Ման-  
թաշով դառ, խալխի աչքը քոռացրու... Արի, արի, ձեռաց  
կանդրախա կապենք, Նահօի ախպէրն էն ա ըստեղ ա... Դրու-  
ստըն իմանաս՝ ըտուր խաթրու վեր եմ կացել ու էս զօռ  
վախտը գեղից էկել էստեղ:

ՊԵՏ. Չեմ կարող:

ՍԱՐ. Ախր կնիկ ունես, երկու տղի տէր ես... Տղեր-  
քանցդ քանի կարաս բոլ փող թող, որ վերջը քեզ գէօքա-  
գէօն չանեն... Տղերքդ փող կունենան՝ փողով էլ ախչիկ  
կուզեն... Մեռնես՝ քեզ էլ ամեն վախտ օղորմի կը տան...

ՊԵՏ. (Ներքին յուզումներից տառամ) Ինչո՞ւ անպատճառ  
իմ որդոցս համար աշխատեմ...

ՍԱՐ. Բա անց ես իմանում...


ՊԵՏ. Որտեղ որ հարկաւոր է... նպատակ պիտի լինի...  
Ես շատ եմ մտածել... Ինչո՞ւ անպատճառ մեր սեփական  
զաւակներին... Իմ որդիքը արժանաւոր չեն... Անն, ես քեզ  
պարզն ասում եմ, Սարիբէգ. ես իմ զաւակներից սաստիկ  
դժգոհ եմ... (Սասկացող յուզումների միանում է ցալի զգա-  
ցումներ): Ուրեմն ինչո՞ւ փողը նրանց համար թողնել...  
Իրանք թող աշխատեն և ապրեն... Իսկ փողը պէտք է տալ  
աւելի արժանաւորներին...

ՍԱՐ. (Տարակուսած նայում է նրա բերանին):

ՊԵՏ. Շատ եմ մտածել... Առաջ էլ եմ մտածել: Իսկ  
փողը սասնալուց յետոյ՝ աւելի շատ... զիշերներ եմ լուսա-  
ցրել... Վերջը ես իմ վճիռը կայացրել եմ... (Սկսում է աս-  
տիականաբար սգեւորել իր կայացրած վնասով):

ՍԱՐ. Ա՛ փեսայ, քու էդ ասածիցը զլուխս բան չի  
մտնում, ես մենակ էն եմ իմանում...

ՊԵՏ. (Պարզօրէն) Սարիբէգ, ես քեզ ճշմարիտն եմ  
ասում՝ այդ բանի մասին ես դեռ ոչ ոքի խօսք չեմ ասել...  
Մտերիմ մարդ չունեմ... Մարդ չկայ՝ որին հաւատաս. կա-  
սեն՝ գիժ է... (Սնդիւհաբար դառնութեամբ) Ես վաղուց է  
զգեւ եմ մարդկանցից... մարդու լաւութիւն արա, բայց նրա



հետ գործ մի՛ ունեցիր... Մի խօսքով. ես վճռել եմ ոչինչ  
չտալ ո՛չ Մանէլին, ո՛չ Ռաֆայէլին...:

ՍԱՐ. (Զարմացած՝ սպասում է):

ՊԵՏ. Բեզ տարօրինակ է թւում... բայց ես այդպէս եմ  
վճռել:

ՍԱՐ. Բա լաւ, որ էքուց-էլօր մեռնես՝ էդ փողերը  
հետք ես տանելու...

ՊԵՏ. Ինչո՞ւ տանել, ինչո՞ւ մեռնելուն սպասել... հիմի-  
կանից... գիտեմ՝ ինչ կանեմ... Կստանայ նա՞՛ ով աւելի  
արժանաւոր է, ընդունակ է, գեղեցիկ սիրա ունի... (Ոգեւո-  
րութիւնից տառամ) Ես քեզ աւելին կասեմ. ասացի՛ թող  
ուրեմն բոլորը քեզ ասեմ... Այդ փողը կըտամ Առուշանին...  
քո որդուն...:

ՍԱՐ. (Չի հաւատում):

ՊԵՏ. Առուշանը ընդունակ տղայ է... շատ խելացի...  
գաղափարական մարդ կը գտնայ... Շատ արժանաւոր տղայ  
է... Թո՛ղ գնայ՝ բարձրագոյն կըթու թիւն ստանայ... փողը  
Առուշանին կը տամ...:

ՍԱՐ. (Նանրամուրում) Ի՞նչ ես ասում ս՝ անաքանդ...

ՊԵՏ. Սարիբէգ, հաւատա ինձ... ես ճիշտ եմ ասում...  
(Ոգեւորութիւնը քուլանում է: Շփոթում է):

ՍԱՐ. Փե... փեսայ...

ՊԵՏ. Ազնիւ խօսք... ազնիւ խօսք... (Կուզեմար, որ այդ  
միջոցին ոչ ոք ներս չմտնի):

ՍԱՐ. Իմ տղին... (բարձր) Ինձ ձե՞ռ ես անում, ս՝  
անաճակ...:

ՊԵՏ. Ոչ, ոչ... սաս... (աւելի է շփոթում):

ՍԱՐ. (Դեռ չի սրավել): Փեսայ... Պետրոս փեսայ...  
բաս հաւատամ, զրո՞ւտ... էդ փողերդ իմ որդուն ես տալու...:

ԵՂԻՄ. (Գալիս է խոհանոցից՝ կերակրով լի աման ձեռ-  
քին:—Առուշանին, Ռաֆայէլին) Հալա չէ՞ք սկսել... (դպի  
միւս սենեակի ակնարկելով) Ներսէս ես... Չէն տէ՞ք՝ թող գան  
նստեն... (ամանը խառնում է շերտիպ):

ԱՌՈՒԾ. (Վեր է կենում, գնում միւս սենեակը):

ՌԱՖ. (Նարգու փաւերը անփութօրէն խառնելով) Է՛հ,

տրամադրութիւն չկայ: (Վեր է կենում եւ յօրանջում): Գոնէ  
այս գիշեր լօտօյում մի քառասուն ուսրի էլ է տանեմ...  
էրէզ գիշեր Բնչ կվարտէրնօնէր կորցրի... (նսում է նաւա-  
սեղանի առաջ):

ԵՂԻՍ. Քիչ լօտօ խաղա, որդի. տեսնում ես՝ տարւում ես:

ՌԱՅ. Մի օր էլ՝ այնքան կտանեմ, որ տարւածս կը  
ծածկեմ:

ԱՌՈՒՇ. (Միւս սենեակն է մտել եւ յանկարծակիի բերել  
քէ Պեսրոսին եւ քէ Սարիբէգին): Քեռի, ճաշը պատրաստ է...

ՍԱՐ. (Դեռ զարմանքի ազդեցութեան տակ): Էս ա գալիս  
ենք... (Ձեռքը մեկնում է քէ՝ «դու գնա»):

ԱՌՈՒՇ. (Յեռ-յեռ նայելով դուռն է գալիս Պեսրոսի  
սենեակից):

ՊԵՏ. (Սարիբէգին, շտապ) Առայժմ մեր մէջ մնայ...  
մերոնք միանգամից չիմանան... հարկաւոր է նախապատրա-  
ստել... Լսում ես, Սարիբէգ... (միւս սենեակն է մտնում՝  
զլուխը կախ):

ՍԱՐ. (Ուշադրութիւն չի դարձել): Հը՞... (նսեւում է  
նրան):

(Ռափայկը սկսել է ուտել:—Առուշանը սպասում է, որ  
Պեսրոսը նստի):

ԵՂԻՍ. Դէ նստեցէք... (լցնում է ափսոսանքը):

ՊԵՏ. (Լուս նսում է):

ՍԱՐ. (Դեռ մնում է կանգնած՝ անորոշութեան մեջ):

ԵՂԻՍ. Ձերթմէն մի քիչ հաստ դուրս էկաւ. շտապելն  
էլ էսպէս կը լինի: Մենակ մարդ՝ սր մէկն ա՛նեմ. մի ծառայի  
արժան չգառայ... Խի՛ չես նստում. Սրարիբէգ, բա սովել չէս:

ՍԱՐ. Հաց ուտելու գո՞րգ ունեմ... (նսում է: Տենդոս  
նայեացով նսեւում է Պեսրոսին):

ՊԵՏ. (Սկսում է լուխալու ուտել: Հանգիստ չէ):

ԵՂԻՍ. (Անանք Առուշանին մեկնելով) Քո սիրած չխըր-  
թմայ եմ էփեղ, Առուշ, ոչխարի մսից... Էքուց-էլօր կերթաս  
օտար տեղ, հօրքերդ մեռնի, էլ սով է քո սիրած կերակուր-  
ները էփելու ..

ՍԱՐ. (Ակամայ) Վա՛հ...

ԵՂԻՍ. (Ուշադրութիւն է դարձնում): Ի՞նչ ես վա՛հ ա-  
նում... Բաժինդ մի սառցնի... (նայում է նաեւ Պեսրոսի վ-  
րայ): Ձեզ Բնչ է պա տանել...  
ՊԵՏ. Ոչինչ, ոչինչ... Սարիբէգ, գինի խմիր... (արագ  
լցնում է նրա բաժակը):

ՍԱՐ. (Անձեռնոցիկը ձեռքերին փակելով) Օ՛ֆ... (ինքն  
իւրան) էսէ՛նց բան... (փորձում է ուտել, բայց չի կարողանում  
յուզմունքը զսպել):

ՊԵՏ. (Հայեացքով փորձում է զգուշացնել նրան):

ՌԱՅ. Ո՞նց ասիր, քեռի՛՝ կօմպէրացի... հա-հա... կե-  
նացդ, քեռի, բարով կառավարես...

ՍԱՐ. (Վեր է կենում: Յուզմունքից պսոյս-պսոյս է  
գալիս):

ԵՂԻՍ. Ի՞նչ խաբար է:

ՍԱՐ. Խաբար. Բնչ խաբար... ըսկի... լաւաշի կտոր  
մնաց բողազումս... (նայում է): Էս ա մի կօմ ջուր խմեմ...  
(Ջուր է լցնում: Ձեռքերը դպում են: Խնում է: Մաքում է  
երեսի ֆրսիկը):

ԵՂԻՍ. Նստիր, օրինաւոր հաց կեր...

ՍԱՐ. Իշտա՛հ չկայ, ախպէր... (ինքն իւրան) Ի՞նչ էի  
մտածում—Բնչ դուս էկաւ. էլ Նահօի բա՞ղս որն է...

ԵՂԻՍ. (Պեսրոսին) Էդ մարդը Բնչ է իրան-իրան փնըթ-  
փնթում...

ՊԵՏ. (Վերին ասիւնանի անյարմար և անհանդ պրութեան  
մեջ է բնկել: Պատասխան չունի):

ԵՂԻՍ. Մեզոյ քեզ, Աստուած...

ՌԱՅ. (Ճակասը ցոյց տալով, ծաղրաբար) Քեռի, էկէ՛լ են...

ՍԱՐ. (Պոռքկալով) Սարէթ...

ՊԵՏ. (Բնազդային երկիւղով՝ վեր է կենում) Սարիբէգ...

ՍԱՐ. (Նրա միտքը հասկանալով հանդերձ և կոկորդը ցոյց  
տալով) Խեղտում ա... Ձեմ կարայ դիմանայ... ախր իմ սղէն  
ա, ես նրա ծընողն եմ...

ՊԵՏ. Ես խնդրում եմ քեզ...

ՍԱՐ. Առուշ, որդի...

ՊԵՏ. Վերջապէս... վաղաժամ է...

ՍԱՐ. Սարէթ, էն քսան հազար մանկեր... ասում ա՛  
իմ որդեկերանց չեմ թողնի...

ՌԱՅ. (Դեմոնստրասիւ կերպով վեր է կենում: Վնունւմ  
է խիստ խօսել):

ԵՂԻՍ Ի՞նչ... (յանկաբժակիի գալուց՝ բալիում է կերա-  
կուրը սեղանի վրայ):

ՌԱՅ. Հայրիկ... (անձեռնոցիկը մի կողմ է շարժում:  
Աչքերը լցում են բարկութեամբ):

ԵՂԻՍ. Մի օր չեղաւ, որ օրինաւոր հաց ուտենք... մեր  
տանը մի բան չի պակասի... (մտքում է սեղանը):

ՌԱՅ. Իսկոյն ասա՛ սրքան է իմ բաժինը...

ՍԱՐ. Առեւ, արա, տնաքանդի տղայ, փողերը սաղ քեզ  
վրայ ա հաստատում...

ՌԱՅ. Ինչպէս... (Վայրկենապէս քննամական հայեացք  
է ձգում դեպի Առուեանը):

ՊԵՏ. (Բրտիմ է վրայ շալիս):

ՍԱՐ. ... Ասում ա՛ սաղ տալիս եմ Առուշանին... Իմ  
էրազը կատարում ա... (Առուեանին) Դէ վեր կաց, բիձուդ  
ձեռք, ոտը պաշի է... Օ՞օֆ...

ԵՂԻՍ. (Ապշել է):

ՌԱՅ. (Դողալով ու կակազելով) Ուրեմն ես ու Մանէլը  
ոչի՞նչ: Մեզ բան չէս տալիս... Մեկ որդի չէս հաշուում... Ես  
էլ ի՞նչ պատասխան տամ իմ պարտքատէրերին...

ԵՂԻՍ. (Սարիքեզին) Դրուստ էզպէս բան է ասել քեզ...  
Գժւէլ էք երկուսդ էլ...

ՊԵՏ. (Սասիկ շփուել է: Զղայնօրէն խաղում է հացի  
փերանքների հետ):

ՌԱՅ. (Կանգնում է նրան դեմ յանդիման): Ինչո՞ւ ես  
մեզ զրկում... Վճռել ես՝ քսանհազարը մենակ Առուշին թո-  
ղնել... Դա ի՞նչ վճիռ է...

ՊԵՏ. (Ինքնապաշտպանութեան բնագոյից բռնկելով) Ես  
արգելում եմ քեզ միջամտել իմ ներքին գործերին... Դա  
ի՞նչ է նշանակում... բռնութիւն է... (Իրան հազիւ զսպելով՝  
ոտքը զարկում է յասակին): Դուք արժանի չէք... Դա իմ  
կամքն է... (ձշում է բոլորովին անտեղի) իմ կամքն է (իւր  
սենեակն է գնում):

ՌԱՅ. (Ապուշ է կտրում):

ՍԱՐ. (Նստել է քախսի վրայ):

ԱՌՈՒՇ. (Արձանացել է սեղանի մի ծայրին):

ԵՂԻՍ. Սարիքէզ, երազում խօս՛ չէք...

ՍԱՐ. (Լուռ է):


ԵՂԻՍ. (Ռաճալեղին) Դ՞՞ու ուր ես գնում:

ՌԱՅ. (Յուզւած, լացակումած) Մանէլին հեռագիր  
տամ՝ գայ: Հայրս շատ է հեռու գնացել: Մանէլը նրա հա-  
լիքը կը գայ (Գնում է):

ԵՂԻՍ. Մեղայ քեզ, Աստուած, մեղայ քեզ, Աստուած...

ՊԵՏ. (Մտաւանջւած՝ կանգնել է գրասեղանի մօտ):

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր



Բ. ԳՈՐԾՈՂ ՈՒԹՅՈՒՆ

Եղիսարէթը շտապով աւելում ու կարգի է բերում Պետրոսի սեփականը: Լաւ չէ արամադրւած: Ինքն իրան խօսում է մըթմըթալով:

ԵՂԻՍ. Դէ տեսնենք, հիմա ինչ կասի: Թող պատասխանը տայ, թէ կարենայ: Բա անելու բան է, որ ուզում է անել... Հիմա կը տեսնենք, թէ սնց կանի... (բազկաքողը ճնկալով մի կողմ է փառում):

(Իրսից գալիս է Առուշանը: Առաջին սենեակում մտքը շփոթելով, մօտենում է միւս սենեակի դուռն ու կանգնում շեմքին):

ԱՌՈՒՇ. (Տրամադրութիւնը լաւ է: Ես ուրախ եմ, սակայն և անհանգիստ կասկածոս, անվստահ, երկմիտ): Բարեւ, հօրաքոյր:

ԵՂԻՍ. (Գործը չընդհատելով, գլխով բարեւի նշան է անում:—Գրասեղանի սակը մաքրելով)՝ բա էսքան թուղթ կը լինի, որ սա է ճղրտոտում ու գետնին ածում...

ԱՌՈՒՇ. Հօրաքոյր, ես արդէն աւարտեցի:

ԵՂԻՍ. (Մըքմըքացնում է՝ ցած կուացած):

ԱՌՈՒՇ. (Մօտ գնալով) Հօրաքոյր, քննութիւններս աւելի վերջացրի... գիմնազիան աւարտեցի...

ԵՂԻՍ. Վերջացաւ գործդ... լաւ ես արել, որդի... (Ուղղում է, որպէսզի մի քիչ շուրջ փառի): Իմ հոգին դուրս է կալ... (Նստում է: Կասկածոս և խորամանկ հայեացք է նետում Առուշանի կողմը):

ԱՌՈՒՇ. (Մի քիչ շփոթւում է): Գիտես, հօրաքոյր... (Նեղն ընկած) Ռաֆայէլը տանը չէ:

ԵՂԻՍ. (Նայն կասկածոս հայեացքով, անհարբեր), Նստի, խի՞ չես նստում... Հա, Ռաֆայէլը. տանը չի: Ո՞վ է իմանում՝ ուր է գնացել... (Անկիտակ է ձեւանում): Տղայ է էլի. (Լաում է):

ԱՌՈՒՇ. (Լաում է: Հարցնելու նիւթ է սրնում, բայց չի գտնում: Տատանում է. չգիտէ՝ ի՞նչ անի: Երկուսն էլ անյարմար դուրսեան մեջ են ընկնում իրար հանգեպ):

ԵՂԻՍ. Բիձուղ տեսիլ ես էսօր (Սկսում է դիտել նրան զննօրէն):

ԱՌՈՒՇ. Ոչ... Բայց ես շատ եմ ուզում տեսնել: Երևի, շուտով կը գայ...

ԵՂԻՍ. (Նշանակալից) Ինչի՞ համար ես ուզում տեսնել: Հարկաւոր բան ունես հետը:

ԱՌՈՒՇ. (Տատանում է):

ԵՂԻՍ. (Խօսելու եղանակը փոխելով) Էդ մարդը... չէս իմանում՝ միտքը ինչ է, նպատակը ինչ է... Քսան հինգ տարի նրա կնիկն էմ. որ հարցնեն՝ ի՞նչ մարդ է, —ինչ իմանամ... Էնքանն էմ իմանում, որ նրա խելքով գնացողը օգուտ չի տեսնի... (Փոքրիկ պառկա): Քու բիձէն հէնց էն գլխից սիրում էր զարմանալի-զարմանալի խօսել... Տէրտէրի ցեղ է ախր: Սուտ չի ասած՝ տէրտէրի ցեղի մարդիկ՝ մի ուրիշ թահր են լինում... Ինքն էլ տէրտէր պէտք է օժէր. օժէր պըծնէր էլի: Միտքը փոխեց, թէ՛ չէ, մեր հողաբաւկանութիւնը աղաւանդած է, էսէնց է, էնէնց է... Մասխաւ: Շատ է միամիտ. վեց տարեկան էրէխէն ձեռիցը կը բռնի, ջուրը կը տանի ու ծարաւ յետ կը բերի... Շատ անգամ՝ ինքն էլ չի իմանում՝ ինչ է անում... Լաւ է, էրէխէքս էլ է հասել են. էլ առանց նրանց՝ բան չի կարող անել... էրէխէքս չեն թողնի (ընկզմում է վերջին խօսքեր):

ԱՌՈՒՇ. (Վիրաւորակ է զգում): Հասկանում եմ, հօրաքոյր, թէ ասածդ ինչի՞ մասին է: Բայց ինչու ես կարծում, որ ես առանց այլակայութեան կը համաձայնեմ քեզու խօսքերին: Ես հօ ամբողջ փողը չեմ վերցնի:

ԵՂԻՍ. Էհ, որդի, ասում ես: Փող է է՛, տունն Աստուած քանդի: Փողը բարեկամութիւն ասած բանը չի իմանում:

Քանի որ գաղ չես ունենում՝ ամենի հետ լաւ ես. ձեռք որ փող է ընկնում՝ էլ ախպէր, էլ հարեան—դիփ մոռանում ես էղպէս է աշխարհ... Հիմա դու ես իմանում: (Աչքերն արտաւակալում են: Խորք հոգւոց հանելով՝ երեսը շուռ է ցալիս և աչքերը արբում գոգնոցով): Է՛հ, որդի, բա կարծում ես ինձ համար հէշտ կը լինի, որ քեզ ատեմ... (վեր է կենում), Աստուած ամեն բանի վերջը լաւ անի, որ մեր տանը անհամութիւն չգատահի, դուշմանի սրտով չզառնանք... (Աչքերը նորից լցում են):

(Գալիս է Պետրոսը)

ՊԵՏՐՈՍ. (Մտախոն է): Բարի օր... Եղիտարէթ. դու արտասուում ես...:

ԵՂԻՍ. (Զի պատասխանում Պետրոսին: Արագ վերջացնում է գործը: Բազկարոտը տեղն է դնում):

ՊԵՏ. (Պատրաստելը դնում է սեղանի վրայ: Հանում է սխառուկը և կօշիկները և քեթիլ բանկոն ու տուֆլիներ հագնում: Եղիտարէթից պատասխան չստանալով՝ ինքն էլ է լուում):

ԱՌՌԻՇ. (Անյարմար դուրսեան մեջ է բնկնում):

(Տեսարան):

ԵՂԻՍ. (Իրանդանի վրայի փոշին մատելով): Սարիբէզը բա սրդի է:

ՊԵՏ. Ես նրան չեմ հանդիպել:

ԵՂԻՍ. (Թերահաւատ) Բա քեզ մօտ չի էկել: (Առուժանի կողմն է նայում գալստի):

ՊԵՏ. Դպրոց: Ոչ... Ես այտակ, նա էլ այտակ, ի՞նչ կարիք ունի դպրոց գալ՝ ինձ տեսնելու համար:

ԵՂԻՍ. Ո՞վ է իմանում. մարդ է, հարկաւոր գործ կարող է լինել... (ակնարկների շեշտով է խօսում):

ՊԵՏ. (Զի պատասխանում: Սեղանի առաջ կանգնած, սկսում է արագ մի գիրք քերել):

ԱՌՌԻՇ. (Անհանգիստ է: Կուզեմար, որ Եղիտարէթը դուրս գնար):

ԵՂԻՍ. (Նայն ցանկութեամբ) Առուշան ջան, գործ ունե՞ս... Մի գնայիր՝ հօրդ գթնէիր, գայ. ճաշի վախտ է:

ԱՌՌԻՇ. (Դժկամակում է): Ինքը կը գայ, հօրաքորը: ԵՂԻՍ. Գնաս-կանչես՝ լաւ կը լինի: Ո՞վ է իմանում լալքի ուշացում: Արտալա եմ էփել. որ սառչի՝ էլ ի՞նչ համ կուտենայ: Գնա, որդի... էլ մի ուշանայ...:

ԱՌՌԻՇ. (Դեպի դուռն է դիմում):

ՊԵՏ. Մնա, Առուշան, ես խօսելիք ունեմ քեզ հետ:

ԵՂԻՍ. Ի՞նչ խօսելու վախտ ես գթել, այ մարդ: Գնա բանիդ, Առուշ ջան:

ՊԵՏ. Ես Առուշանի հետ գործ ունեմ: Նա պէտք է այտակ մնայ: Դու մի խանգարի:

ԵՂԻՍ. Դէ հը՛, մնում է թող մնայ: Բալքի ես էլ քեզ հետ գործ ունեմ: Քու կնիկն եմ, բա մի կէս սնաթ էլ է չկարենամ հետդ մենակ խօսել: Քեզ բան ունեմ ասելու:

ՊԵՏ. Ասա:

ԵՂԻՍ. Բալքի չեմ ուզում, որ մի ուրիշն իմանայ, թէ գող էմ որդին լինի...:

ԱՌՌԻՇ. (Պատրաստակամ) Ես կը հեռանամ, հօրաքորը... (դուրս է գնում):

ԵՂԻՍ. (Շեղծում սպասում է, որ նա դուրս գնայ:) Հօրդ ասա, թող շուտ գայ...:

ՊԵՏ. Ի՞նչ ես ուզում ասել:

ԵՂԻՍ. (Ազդու սիրաբերից պատրաստ ունենալու յողբական, բայց եւ անհամբեր տոնով) Էն եմ ուզում ասել, որ Մանուէլը էկել է Բաքուից... Սնաթի տասը անց էր որ վագրից էկաւ Ֆայտոնով... (Նայում է քի ի՛նչ ազդեցութիւն է բողել Պետրոսի վրայ):

ՊԵՏ. (Տեղեկութիւնը անպատասխան էր: Թողնում է գիրք: Դեմքը փոքր ինչ այլալուում է): Որտե՞ղ է հապա...:

ԵՂԻՍ. Ռաֆայէլի հետ դուրս գնացին... Որդի որ է՛ գալու ես:

ՊԵՏ. Առճղ է... ի՞նչ է ասում իր գործերի մասին... Պաշտօն գտել է...:

ԵՂԻՍ. Չեմ իմանում... կը գայ՝ կիմանանք:

ՊԵՏ. Ինչո՞ւ է էկել. այտակ գործ ունի... նորից Բագու կը վերադառնայ:

ԵՂԻՍ. (տուտափելով) Էդ բոլորը ինքդ մանրամասն կը հարցնես, կիմանաս... Հիմա ես քեզ բան պէտք է տեսմ... (Համբերահաս) Ախր Էդ ի՞նչ բան ես մտածել... Դրուստ ուզում եմ՝ քսանհազարը գիրփ Առուշանին տալ... Էն օրւայ ճաշից դէսը ես էլ իմն չեմ. էս գիշեր քունն չտարաւ... Հանա՞ք ես անում թէ՞ զորթ-զորթ ուզում ես էդպէս բան սարքել:

ՊԵՏ. (Հասկացնելու յարուար ձեւ է որոնում): Եղիսաբէթ, այդպիսի բաներում ի՞նչ հանաք կարող է լինել... Ես համոզւած եմ, որ քեզ համար տարօրինակ է... Անշուշտ, անսովոր բան է... Բայց դա իմ համոզմունքն է...

ԵՂԻՍ. Մտածի՛ր այ մարդ, ի՞նչ ես անում. քու հարազատ որդկերանց զրկում ես... Մեր որդիքն են, մերը, քունն ու իմը. ես եմ ծնել նրանց... Դու հիմա ուզում ես զրկել թէ ինչ է՝ Առուշին տաս սաղ փողը...

ՊԵՏ. Եղիսաբէթ... Չգիտեմ, ի՞նչ ձեռով բացատրեմ, որպէս զի դու հասկանաս...

ԵՂԻՍ. Այ մարդ, էստեղ էլ ի՞նչ հասկանալու բան կայ: Մեր որդիքն են, չէ՞. դէ պրծաւ—գնաց... Գու որդիքը Ռաֆայէին ու Մանւէլն են. բա Առուշանն ու Մանւէլը ես Ռաֆայէլը մէկ են...

ՊԵՏ. Առուշանը շատ արժանաւոր տղայ է...

ԵՂԻՍ. Ո՞վ է բան ասում. շատ լաւ տղայ է, իմ ախպօրս որդին է. մեր տանն է մեծացել... Բայց սնց ախր զրկեմ իմ հարազատ որդկերանց. կարելի՞ բան է:

ՊԵՏ. (Դժուարին դուրսան վեց է ընկնում):

ԵՂԻՍ. Հասած տղէքք են. էքուց-էլօր փսակւելու են...

Մենք էլ ծնողներ ենք՝ նրանցով պէտք է ուրախանանք...

ՊԵՏ. Բայց դու մոտանում ես, եղիսաբէթ, որ Մանւէլն ու Ռաֆայէլը արժանաւոր զաւակներ դուրս չեկան... իմ յոյսերը չարդարացրին...

ԵՂԻՍ. Ո՞ւմից ինչո՞վ են պակաս, որ խօսում ես էդպէս...

ՊԵՏ. (Համոզմունքով) Մանւէլը անպիտան կեանք է վարում. վատ սրիկաների հետ է. հարուստներից փող է պահանջում...

ԵՂԻՍ. Դիփ սուս է...

ՊԵՏ. (Քիչ յուզած): Ժշմարիտ է... Իմ որդին այդպիսի բաներ անի... (Ցաւ է զգում):

ԵՂԻՍ. (Մի վայրկեան զննարափուում է): Է՛, դու էն գլխից անբուսական ես ըլել: Բա մի-մի գեներալ-գուբէրնատուր չէին դառնալու...

ՊԵՏ. Դրա մասին ամենակին չեմ մտածել... Գոնէ զըպըրոցն աւարտէին, վկայական ձեռք բերէին ու յետոյ աշխատէին թէ իրանց համար և թէ հայ ժողովրդի համար... մեր ազգի համար պիտանի անդամներ լինէին... Այս է եղել իմ ջերմ ցանկութիւնը... Որքան եմ աշխատել. ոչինչ չեմ խնայել: Բայց ո՞չ մէկը չգնաց իմ ասած ճանապարհով... Քեզ յայտնի է հօ, շարունակ համոզում եմ Ռաֆայէլին, որ գործի կանգնի, իսկ նա մերժում է, որովհետեւ շատ ծոյլ է... Երեք անգամ մեծ շարչարանքով պաշտօն եմ գտել—չի համաձայնել... Ոչ մէկին էլ արժանաւոր զաւակ չեմ համարում...

ԵՂԻՍ. Լաւ են՝ վատ են՝ քու որդիքն են... Խօսմ դէն չես ածելու... Թէկուզ աւագակ լինեն՝ իմ որդիքն են, ոչ ոքի հետ չեմ փոխի աշխարի էրեսին... Ի՞նչ կարող ես ասել... Ես ի՞նչ անեմ, որ դու քու հարազատ որդկերանց չես սիրում...

ՊԵՏ. Եղիսաբէթ, ես սիրում եմ Ռաֆայէլին էլ, Մանւէլին էլ. ես ունեմ հայրական զգացմունք: Միթէ՞ դու կարող ես կասկածել... Ես սիրում եմ իմ զաւակներին... բայց և այնպէս... Էն, դու ինձ հասկանալ չես կարող...

ԵՂԻՍ. (Մտնելով) Թող թէ Աստուած սիրես... Գործը որ էդ տեղն ես հասցնում—եւ էլ իմ ուզածը կանեմ. ես իրաւունք չեմ տայ, որ իմ որդկերանց զրկես: Թէ՛ դու հէք ես՝ ես էլ մէր եմ: Օրէնք կայ, սէնօտ կայ, նաւարիտու կայ... Օրէնքը չի թողնի, որ էդպէս բան սարքես...

ՊԵՏ. Օրէնքը չի կարող արգելել...

ԵՂԻՍ. (Պնդելով) Էդ քսան հազարը իմ էրկու տղին պէտք է հասնի... Առուշ-մարուշ չեմ իմանում... Զօնով ու-

զում ես մեր սանը դարձադալ քցել... Խօս՝ խմանում ես՝  
Մանուէլը ինչ կրակի կտոր է...

ՊԵՏ. Կսիր, Եղիսարէթ...

ԵՂԻՍ. Եղիսարէթը մեռնի, էդպէս բան չտեսնի, ինչ  
դու ես ուզում անել... Քսան Նինգ տարի, լաւ-վատ, սիրով  
ապրել ենք. չարչարանքով տուն եմ պահել, որդիերանցս մե-  
ծացրել... Եր օրւան համար եմ դիմացել... (Աչքերը լցւում  
են արտասուքով):

(Դրսից գալիս է Սարիբեգը)

ՍԱՐ. Բարաջողում... Բա խի՞ ես լաց ըլում, Սարէթ ջան:

ԵՂԻՍ. Սարիբեգ, դու ինչ ես էլ սրա խելքին ընդել...  
էն փողերը մի վերցնի. ասա՛ չեմ ուզում... Որդիքս մեղք  
են... (Պետրոսին) Որ տալիս ես, սրանց էլ հարցրու՛ վեր-  
ցնում են...

ՍԱՐ. Ի՞նչը, Սարէթ ջան...

ԵՂԻՍ. Ի՞նչը. իբրև թէ մոռացել ես:

ՍԱՐ. Հն, փողը: (Չեւանալով) Է, դու էլ հաւատում  
ես... Փէսէն էդպէս բան չի անի...

ԵՂԻՍ. Կանի, կանի, ես սրան լաւ եմ ճանաչում...

Շաշութիւնը մին-մին գալիս է... (վրդովւած, գնում է խոնա-  
նոց եւ այնտեղ սկսում է զբաղել յանախ օգտելով փոփոխ  
պանարանից):

ՍԱՐ. (Լուռն է, Պետրոսի կողմը նայելով):

ՊԵՏ. (Լուռ է: Ներուս յուզւած է: Շուս-շուս շփում է  
նակասը):

(Լուռքիւն):

ՍԱՐ. (Նսնում է: Տարակուսանով, քեանաւատքեամբ  
և հարցակնօրէն նայում է Պետրոսին ու սպասում: Յօրան-  
ջում է: Իննի իրան հաս-հաս խօսքեր է մտքբացնում, որպե-  
զի գրաւի Պետրոսի ուշադրութիւնը):

ՊԵՏ. (Շարունակում է լսել):

ՍԱՐ. (հորը շունչ է կառում): Մարդ իմանայ՝ աշխար-  
քը ինչ բանի համար ա ստեղծւել... Եանի օրուս կայ...

ՊԵՏ. Իւրաքանչիւր մարդու նպատակը պիտի լինի՝

բարութիւն... Բայց խանգարում են, ամենքը խանգարում  
են... Մարդ չի կարողանում ազատ լինել: (Լուռն է):

ՍԱՐ. Առուշն էկա՞ն քու կուշար...

ՊԵՏ. (Իլլավ է անում: Թերթում է գիւր):

ՍԱՐ. Ասում ա՛ գիմնագին սող վերջացրի... Եկաւ, որ  
քեզ էլ իմաց տայ... Դէ լաւ ա, որ պրծաւ, թէ չէ՛ նրա ու-  
սումի փողը տալով՝ տունս էն ա քանդւելու էք... (Լուռ-  
քիւն): Ասում ա՛ բիձէս ժամանակ էլ ա ունենում չի թէ՛ հե-  
տը մի քիչ զրից անեմ... Բիձուս, ասում ա շատ եմ պատ-  
ւում. ասում ա՛ զարմանալի փիլասոփ մարդ ա, ասում ա...  
Քու հէրը, օղորմածիկ աէր-Մուսէսը միշտ կասէր ախր՝ իմ  
որթին ազգի պարծանք ա դառնալու... Դէ էն ա դառել ես:

ՊԵՏ. (Չի պատշախտում: Իրան գրաղւած է ձեւացնում):  
(Լուռքիւն)

ՍԱՐ. (ձաւախտ, անհամարձակ) Փեսայ... հիւանդ  
խօս չէս:

ՊԵՏ. Ոչ... միայն փոքր ինչ վատ եմ զգում ինձ...

ՍԱՐ. (Կարեկցաբար) Տարութիւն ունե՞ս...

ՊԵՏ. Ոչ, այնպէս...

ՍԱՐ. Փոքր ա կապ:

ՊԵՏ. Ոչ... գլուխս ծանրացել է...

ՍԱՐ. Շատ ես միտք անում...

(Լուռքիւն)

ՍԱՐ. Փեսայ .. (դեպի դուռն է նայում՝ ուրիշ մարդ  
կա՞յ արդեօք: Յածր)՝ էն բանը սօց ա ընելու...

ՊԵՏ. Այսինքն՝ ժառանգութեան գործը:

ՍԱՐ. (Անհարբեր ձեւով): Հա էլի՛—քսան հազարի բանը...

ՊԵՏ. (Թերեակի նետրայնացած)՝ Մէկ անգամ ընդ  
միշտ համողւիր, որ իմ վճիռը՝ վճիռ է... Ի՞նչ կարիք կայ  
շարունակ հարցնելու, կասկածելու... Ես երեխայ չեմ, ին-  
լապար չեմ, որ խօսքերս փոփոխեմ, ասածս մոռանամ...

ՍԱՐ. (Չի հաւատում): Իրո՞ւստ ես ասում: Ամա... դէ,  
սփ ա իմանում, մարդ ենք.. Կրէզը՝ Կրէզ էք, էսօրը՝ էսօր  
է: Մարդն էլ եղանակի պէս ա, փոխւում ա: Եղանակը մին

տեսնում ես՝ արև ա անում, մին էլ բիրդան՝ կարկուտը վրայ ա տալիս, ոնց որ հաւի ձու...

ՊԵՏ. (Աւելի նետրոյնացած) էլի կասկածներ... չես ուզում հաւատալ... Չես հաւատում—մի հաւատայ: Իսկ իմ կամքը հաստատուն է ..

ՍԱՐ. (Իտրձեալ չի հաւատում): Կամքը՝ ամեն մարդ իրա ձեռումն ունի. . Դրուստ ես ասում.. (Քիչ յետո): Բա խի՞ ես էզքան մտածում: Փոշմանած ըլիս քի... Փոշմանել ես, փեսայ...

ՊԵՏ. (Խոր նոզոց է փռում: Ուշաբուրքիւնը ցրում է: Սկսում է անհանգստանալ: Մեր այս, մեր այն գիւրն է վերցնում, ուրիշ տեղ դնում, քերում): Պոսիր ուրիշ բաների մասին... Եւ վերջապէս, գործը քեզ չի վերաբերում, այլ քո որդուն... Ինքս կը խօսեմ Առուշանի հետ: Ո՛չ մի միջնորդի կարիք չեմ զգում: Կարիք էլ չկար, որ երէկ քեզ յայտնեցի իմ վճռի մասին: Բայց չզիտեմ ինչպէս եղաւ, որ յայտնեցի, թէ է չէի ուզում:

ՍԱՐ. Բա վճռական իմ տղին ես բախշում:

ՊԵՏ. (Անհամբեր շարժում է անում):

ՍԱՐ. Եանի դի՛փ... (Նրա դժգոհութիւնը կանխելով): Ախր քսան հազար մանէթ ա, քսան կապէկ չի...

ՊԵՏ. Միենայն է ինձ համար... Ես մի բան ցանկանում եմ և կը կատարեմ... իմ խղճի առաջ ինքս հանդիստ եմ:

ՍԱՐ. Դրուստ ես ասում .. ամա դէ, աշխարք ա, մենք էլ մարդ ենք, ասած ա՛ մահկանացու: Էսօր կանք, էքուց չկանք: Աստու կամքն ա, խօս հարիր տարի ապրելու չենք... Ճըկատի գիր ա... Մէկ էլ տեսնում ես՝ Չանաւարի դայդի մարդը վէր ա ընդնում, մեռնում... Մահը որ կայ ամեն մարդու համար պատրաստ սպանում ա իրա վախտին... Հեռի քեզանից, ամա դէ... չը՞, փեսայ, բա էդ ոնց կըլի...

ՊԵՏ. (Նետրոյնացած) Ի՞նչ ես ուզում ասել... Ես այժմ զզջում եմ, որ...

ՍԱՐ. (Խորանկկութեամբ) Էն ա իմանում ես, ես մէկ էլ ի՞նչ ասեմ... Գրած ունես:

ՊԵՏ. Ի՞նչը:

ՍԱՐ. Կտակն էլի:

ՊԵՏ. Կտակ: Ինչո՞ւ... (սայտում է):

ՍԱՐ. Ո՞նց թէ «ինչու»... Բալքի էքուց մեռնում ես...

ՊԵՏ. Մեռնում... (Առում է):

ՍԱՐ. Համ էլ, կտակդ որ գրես պրծնես, տղէրքդ էլ չեն կարայ դաւի տալ:

ՊԵՏ. Դաւի տալ: Այս մէկը ճիշտ ես ասում: Ես նախազգում եմ, որ իմ որդիքը պահանջներ կանեն. մեր տանը իրարանցում կընկնի... Ես ցանկանում էի գործը աւելի հեռատեսութեամբ, այնպէս՝ զզուշութեամբ վարել. աստիճանաբար համոզելով... (Վշտաբանով) Դու չը պէտք է երեկ ասէիր մերոնց. դեռ ժամանակը չէր:

ՍԱՐ. Ես էլ փոշման եմ: Որ դրուստն ուզես իմանալ, ուշքս էլ վրէս չէր:

ՊԵՏ. Մանէլն էլ եկել է Բագրից.. երեկ այստեղից իմաց են տել:

ՍԱՐ. (Վաս բան գուշակելով) Մանծս...

ՊԵՏ. Նոր եղիսարէթն էր ասում. ինքս դեռ չեմ տեսել նրան... Հիմա ես երկիւղ եմ կրում, որ շատ անկարգ բաներ կանի... Կարծում ես կը համաձայնելի:

ՍԱՐ. (Տարակուսանքի մեջ է ընկել): Հա, դրուստ ա, Մանծն մի ուրիշ ջուռա մարդ ա... Նրանից վախենալու ա...

ՊԵՏ. Ես չեմ վախենում ոչ ոքից... Միայն թէ անախորժ, շատ անախորժ բան կը լինի, որ մեր տանը իրար վրայ խօսեն, թշնամութիւն լինի... Մանէլը կարող է մի ժամում ամբողջ տունը տակն ու վրայ անել... Իսկ ես ուզում էի, որ ամեն բան խաղաղ անցնի .. առանց ընդհանրումների...

(Միւս սենեակում յայտնում են Մանեկն ու Ռամայիլը):

(Մանէլը համարձակ ու եռանդուն արտայայտութեամբ, ջուռա դէմքով երիտասարդ է, 22 տարեկան: Շարժումները՝ նետրոյնացող վճռական: Զայնը՝ ինքնապատահութեամբ ու արհամարհանքով լցւած: Աչքերը՝ սուր ու շեշտա-

կի: Խօսում է շտապ-շտապ: Հագած ունի՝ սև սատինից բլուզ, վրայից պիջակ: Ճիտքաւոր կօշիկներ: Նոր կարտուզ:

(Այդ միջոցին խոհանոցից գալիս է Եղիաբեկը):

ՄԱՆԻԷԼ. (Եղիաբեկին, բարձր) Եկէ՛լ է:

ԵՂԻՍ. (Գլխով դեպի Պետրոսի սենեակն անելով) Կէս ժամ կը լինի:

ՄԱՆԻԷԼ. (Ուղիղ դիմում է դեպի միւս սենեակը):

ՍԱՐ. (Անհանգստացած) Մանօն... (Յածր, արագ) Նստի՛ր, ձեռաց գրի, տանենք նստարիօզի կուշտը...

ՊԵՏ. (Մանեկի ձայնը ազդում է տրամադրութեան վրայ. եւ երբ Մանեկը ներս է մտնում՝ նրա սիրքը մի վայրկեան կծկում է):

ՄԱՆ. (Ներս է գալիս եւ կանգնում դռան մօտ՝ Պետրոսին դեմ առ դեմ: Մի պահ արհամարհանելով դիտում է նրան):

ՊԵՏ. (Կանգնել է գրասեղանի մօտ: Չգիտէ ձեռք ո՛ւր դնի: Լուռ նայում է Մանեկին):

ՍԱՐ. (Այդ անակնկալ դեպքից զինարարված եւ մի պահ բոլոր յայտեր կորցրածի նման՝ մի կողմ է փախում):

(Ներս են եկել նաեւ Ռաֆայէլը եւ Եղիաբեկը: Ռաֆայէլը իր գլխարկն ու բանկոնը բողբ է միւս սենեակում):

(Տեսարան)

ՊԵՏ. Բարով ես եկել, Մանեկ... (Սպասում է):

ՄԱՆ. (Չապաւորեմ) Բարով... (Մօտենում է եւ ստանում բեամբ ու դժկամութեամբ ձեռք մեկնում):

ՊԵՏ. (Համբուրում է նակասը՝ քեքեակի): Բազմից ես գալիս, Մանեկ:

ՄԱՆ. Հնա: (Ծխախոտ է վառում ու ծխում):

ՍԱՐ. Գալդ բարի, Մանօ ջան... (Մօտենում է):

ՄԱՆ. (Անհարբեր) Բարով... (Ձեռք է ցալիս):

ՊԵՏ. Առողջ ես...

ՄԱՆ. Հնա:

ՊԵՏ. Պաշտօն ունեն այնպեղ:

ՄԱՆ. Չէ:

ՊԵՏ. Հապա ի՞նչ ես անում:

ՄԱՆ. Ոչինչ:

ՊԵՏ. Ուրեմն... (Չի շարունակում):

ՄԱՆ. Եօրայ եմ գնում:

ՊԵՏ. Նստի՛ր, Մանեկ...

ՄԱՆ. Շնորհակալ եմ (Նստում է):

(Լուռփուն)

ՄԱՆ. (Շեշտակի) Հայրիկ, ճիշտ է, որ կարողութիւնդ տարիշին ես ուզում բարշել... Մայրիկ, այստեղ արի... Ռաֆայէլ... (Հօրը) Ինձ մի քանի խօսքով հանկացրու, թէ միտքդ ինչ է... Նստի՛ր, մի քիչ խօսենք... (Տեղը փոխում, նստում է գրասեղանի մօտ):

ԵՂԻՍ. (Սարիքգլին) Ախր լինելու բան չի, լինելու բան չի: Բա էլ ես քու քիբը չեմ, դու իմ ախպէրը չես...

ՊԵՏ. Մենք ժամանակ շատ ունենք... Կը խօսենք երեկոյեան կամ վաղը... Ես այժմ զբաղւած եմ... Պէտք է ձաշեմ եւ շուտով գնամ դպրոց, սաներիս դաշտ եմ տանելու...

ՄԱՆ. Չէ, հէնց հիմա պէտք է խօսենք. վաղ-մաղ չեմ իմանում... (Կտրուկ) Ես ո՞վ եմ: Քո աղան եմ թէ չէ: Հը... (Ռաֆայէլին մատնաւելելով) Սա քո աղան է թէ չէ: Հը:

ՊԵՏ. (Չայնը դողում է եւ այնուհետեւ հետզհետէ ողբերգական շեշտ ստանում): Իուք իմ որդիքն եք...

ՄԱՆ. Շատ բարի: Բաս ինչպէ՞ս է, որ քո կարողութիւնը Առուշանին ես տալիս: Հը:

ՍԱՐ. (Անհանգստութեամբ հետեւում է անց ու դարձին):

ՊԵՏ. Լսի՛ր, Մանեկ... այժմ թողնենք... Ուրիշ անգամ կը խօսենք...

ՄԱՆ. Ասում եմ, որ չէ. այս րոպէիս ամեն բան պէտք է վերջացնեմ: Ես չեմ երկարացնի... Հիմիկանից ասում եմ, որ լաւ իմանաս, քո քսան հազար ըւրբլին մեզ է պատկանում՝ ինձ ու Ռաֆայէլին... Քանի քեզ հետ քաղցր ենք խօսում՝ անըր. թէ չէ՝ վերջը դուով կը վերցնենք, կը խլենք:

ՊԵՏ. (Խոցւած, բայց զսպւած) Ամեն մարդ իր կամքն ունի. . Բոնանայու իրաւունք չկայ...

ՄԱՆ. Կամքդ էլ, իրաւունքդ էլ պահիր՝ քեզ համար-  
ինձ չես վախեցնել... Հէնց այս բոլէիս գնանք նօտարի  
մօտ: Վեր կաց, շուտ արա... Տեղնուտեղը կը գրես—կտանկ  
է, ինչ է. ինչ որ ուզում ես, միայն թէ գրիր, որ քո ժա-  
ռանգները ես ու Ռափայէլն ենք, օրինաւոր ժառանգները,  
մենք կըստանանք կարողութիւնդ՝ քո մենեւոյն յետոյ...

ԵՂԻՍ. (Ակամայ) Տէր Աստուած, վերջը բարի անես...

ՍԱՐ. (Ուզում է խօսել, բայց չի համարձակուում):

ՌԱՖ. Կա մտածիր, հայրիկ, ախր անխիղճ բան ես  
ուզում անել

ՄԱՆ. Ես ինքս կը սովորացնեմ, թէ որ գրելու ձևը չես  
իմանում... (Մոցից քյրքեի կապոց է հանում և բան որ-  
նում), Հէնց այսօր կը գրես—կը վերջացնես... (Փնտրած  
բաղբը չգտնելով, համբերահաս) Նօտարը ինքը կասի՝  
ինչ որ հարկաւոր կը լինի... Դէ, վեր կաց, գնանք... (Նա-  
յում է ժամացոյցին) Շուտ, որ հասնենք, թէ չէ կանտորը  
կը կողպեն... (Բռնում է քեւից):

ՍԱՐ. (Ինքն իրան) Այլահա բնիս...

ԵՂԻՍ. (Պետրոսին) Էրէխէս դրուստ է ասում, այ մարդ:

ՊԵՏ. (Ինկզիմէր տխրապետել աշխատելով) Մանէլ, ես քո  
հայրն եմ... լսիր ինձ և յետածդենք այս...

ՄԱՆ. (Ընդհատելով նրան) Տասը տարի է՝ քեզ չեմ  
լսել, մինչև մահ էլ չեմ լսի... Իմ հայրը ես եմ, իմ Աստ-  
ւածն էլ ես եմ... (Ձեռով ծանր զարկում է սեղանին) Չեմ  
թոյլ տայ, որ փողերը ուրիշ մարդու տաս... Գնանք նօ-  
տարի մօտ:

ՌԱՖ. Գնանք, հայրիկ...

ՊԵՏ. Ես կը գնամ՝ երբ ինքս հարկաւոր համարեմ...  
Եթէ որ դու չես ուզում ինձ լսել, հապա ես ինչո՞ւ պէտք է  
քեզ լսեմ... Այդ ի՞նչ նոր տեսակի օրէնք է... Ես չեմ գայ:

ՄԱՆ. Կը գաս.

ՊԵՏ. Չեմ գայ... ինքդ գնա և արա՛ ինչ կամենաս:

ՄԱՆ. Ձեռքերդ, ոտքերդ կը կապեմ ու զօռով կը ա-  
նեմ նատարի մօտ...

ՊԵՏ. (Բռնկուում է): Ամաչիր... հեռացիր իմ սենեա-  
կից... Ես պարտաւոր չեմ քեզ հաշիւ տալ իմ գործերի մա-  
սին... Իու փուշ զաւակ ես... (Գունատում է: Քիչ յետոյ, այլ  
էս պաշտօնակալը է կարողանում ոտքի կանգնել):

ՄԱՆ. Փուշ ասա. բայց քու զաւակն եմ, ժառանգդ եմ...

ՊԵՏ. (Յուզւած) Իուրս գնացէք... ես պէտք է հանգստա-  
նամ...

ՄԱՆ. (Կապիտ կերպով փառում է քեւից) Գնանք...

ՊԵՏ. Ես ինձ վատ եմ զգում... (Նստում է բազկաքառի  
մէջ):

ՍԱՐ. Բա մեզք չի՞. հիւանդ մարդ ա...

ՄԱՆ. (Սարիքեգիին) Քեռի, դու ինչքան քիչ խօսես՝  
այնքան աւելի լաւ կը լինի քեզ համար: Հեռու կաց այս  
բանից. մի խառնուի: Ինչ էլ Ասուշն էլ, —երկուսդ էլ սուս  
կացէք, ձայն չհանէք: Հասկացար: (Հօրը) Ի՞նչ նստեցիր. վեր  
կաց, գնանք:

ՍԱՐ. (Ինքն իրան, անհամարձակ) Սուս կենալ կըլի...

ԵՂԻՍ. Պետրոս, էլ մի հակառակի, հետները գնա...  
Ինչո՞ւ ես հակառակում...

ՊԵՏ. (Եղիապետին) Գոնէ դու հասկացրու քո որդուն,  
որ հարազատ ծնողի հետ այդպէս վարել չի կարելի...  
(Գաշտակալը է խօսում):

ՄԱՆ Քեզ նման ծնողի հետ՝ այսպէս էլ հարկաւոր է  
վարել: Սա դեռ քիչ է...

ՊԵՏ. (Խորապես վշտացած, Եղիապետին) Եւ ինչո՞ւ այդ-  
պիսի որդի ծնեցիր ինձ համար... Սրան ինչպէ՞ս փող տամ.  
փողը ձեռին՝ սոսկալի բան կը դառնայ...

ՄԱՆ. Հրէշ կը դառնամ և չեմ թողնի, որ իմ ժառան-  
գութիւնը ուրիշներին տաս...

ՊԵՏ. Կը տամ... Ես իմ կամքը կը կատարեմ... վաղն  
եթ կտակ կը կազմեմ և հաստատել կը տամ... (Ոտքի է ել-  
նում):

ՄԱՆ. Ես էլ մինչև վաղը կը փշրեմ քո կամքը (Յոյց է  
սալիս բռնկեցիր):

ՊԵՏ. (ձշում է) Դ՛ուրս... (Կոկորդը պղնձում է: Գեմեր գունասում է: Անհաստոս հայեացքներ է ձգում, կարծես շաւրած լինի): Դ՛ուրս...

ԵՂԻՍ. (Մանեկին ցածր) Սուս արքա, որդի... (Պետրոսին) Սիրտդ մի շուռ տայ... (Ուշադրութիւն է դարձնում նրա դեմքի վրայ): Էրեսդ էդ թնչ դառաւ... (Մօտենում է):

ՄԱՆ. (Լուում է):

ՍԱՐ. (Ուզում է խօսել, բայց Մանեկի վախից չի համարձակում):

ԹԱՅ. Հայրիկ, խօսք տուր՝ վերջացնենք...

ՊԵՏ. (Թուլացած նստել է բազկաթոռի մեջ): Գնացէք... ամենքդ...

ՄԱՆ. (Խօսելն այլեւս անօգուտ համարելով) Շաա բարի: Մեզքը քո վիզը: (Միւս սենեակն է գնում: Այնտեղ նրասում է սեղանի առաջ եւ ծխում: Նետրոպիւն դուրեան մեջ է գտնում):

ԹԱՅ. (Հետեւում է նրան: Յանկանում է հետք խօսել, բայց չի վստահանում):

ԵՂԻՍ. Պետրոս, ինչո՞ւ ես ուզում, որ բանը էդտեղ հասնի... Համ գու ես մեզք, համ մենք...

ՍԱՐ. Թողով կապելու գիժ ա էլի... Ամեն բան կը փչացնի... Փեսայ... (Զգիտե՛ ինչպէս անի, որ Եղիաբէրը գնայ): Սարէթ ջան... սովել եմ. ճաշդ ուշանում ա արք...

ԵՂԻՍ. (Պետրոսին) Մեր օջախը մի քանդի...

ՊԵՏ. (Զեռելով է անում, որ հեռանալն է):

ՍԱՐ. (Եղիաբէրին) Ասում ա՛ դնա... Դու հացը քցիւր, ես սրան կը հանգստացնեմ... զայդէն գիզում եմ... Հ՞ը, փեսայ... զօշադ կաց, զօշադ...

ՊԵՏ. (Յամառօրէն) Ինձ մենակ թողէք...

ԵՂԻՍ. (Յոյսը կտրած): Գնանք, Սարիբէգ... Էսպէս վախա՛ մարդ չի կարողանայ հետը խօսել... (Դանդաղ եւ լեւ-լեւ նայելով գնում է դեպի միւս սենեակը): Սարիբէգ, արի...

ՍԱՐ. (Հեղաղով) Գրի՛, գրի՛ կտակը, թէ չէ տուել քանդակելու ա... գրիր...

ՊԵՏ. (Վնականօրէն շարժում է ձեռքը, որ գնայ):

ՍԱՐ. (Շարուն է):

ՊԵՏ. (Դողում է ցնցումներով, Լուս է):

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ք



Գ. Գ Ո Ր Թ Ո Ղ Ո Ւ Թ Ի Ի Ն

Պետրոսը իր սենեակում քնած է՝ անկողնի վրայ հագուստով պառկած: Ծանր-ծանր շունչ է քաշում: Միւս սենեակումն են՝ Ռաֆայելն ու Սարիբեգը:

ՌԱՖ. (Բայլում է, ամեն անգամ Սարիբեգի մոտով անցնելիս՝ խեթ նայելով):

ՍԱՐ. (Նստած է բախտի վրայ: Իրեն զգում է անյարմար վիճակում: Մտախնայում է):

(Տեսարան)

ՍԱՐ. (Այմուկով խնչում է):

ՌԱՖ. Ի՞նչ էս ծանր ու բարակ նստել մեր տանը... քնն:

ՍԱՐ. Դձու էս անում:

ՌԱՖ. Հնա, դուրս եմ անում: Չեզ պէս մարդիկ տուն թողնելու չեն... Դուք մարդավարութիւն չէք իմանում... Բեռի, ձեր կողմից աւազակութիւն կը լինի, որ մեր փողերը վերցնէք: Բա ամօթ չի՞:

ՍԱՐ. Տալիս ա՛ր բա չվերցնենք... Ալլահա բնիս:

ՌԱՖ. Չպէտք է վերցնէք: Լաւ բան չէ... Հրաժարւեցէք՝ դու էլ, Առուշանն էլ... Ասա՛ չեմ ուզում:

ՍԱՐ. Խի՞ եմ ասում է՛:

ՌԱՖ. Անհամութիւն կըսկուի մեր բարեկամութեան մէջ:

ՍԱՐ. Ախր, Ռաֆայել ջան, էս միջ անեմ. իրա կամքն ա... Եղի՛ս. Ի՞նչ կամք, ի՞նչ բան... շաշել է, շաշել... նրան հւր էք ականջ գնում...

ՍԱՐ. (Չի պատասխանում: Կանդապ-դանդապ մօտեցել է Պետրոսի սենեակի դռան: Հազում է մի քանի անգամ): Բողազս էս խի՛ ա էսպէս քոր գալիս...

ՌԱՖ.—Գիտեմ, գիտեմ ի՞նչդ է քոր գալիս: Հազում էս, որ հայրիկը զարթնի, հա՛... Թող զարթնի. այ (գրպանից բանալի է հանում) դուռը կողպել ենք, դուրս գայ, տեսնեմ՝ ինչպէս է դուրս գալիս:

ՍԱՐ. Ալլահա բնիս... Տաւար ա, ինչ ա, որ փիս դօրուղչու դայղի տուն էք արել:

ՌԱՖ. Շատ էլ լաւ ենք արել: Մինչև Մանուէլը յետ չգայ ազվակազի մօտից՝ դուռը բաց չեմ անի:

ՍԱՐ. Ազվակազի՞... (Մտախոհում է):

ՌԱՖ. Հնա, ազվակատ, ազվակատ... Մենք հիմա գործը կը տանենք օրինական ճանապարհով: Աչքերդ լաւ չո՞ւի: Յայտնի ազվակատներ կը բռնենք. թէզուզ հազար մանէթ ուզեն—կը տանք, թաք ձեր հախիցը գանք:

ՍԱՐ. Ախպէր, էլ խի՞ էք բանը ազվակատի ձեռը քցում: Եկէք մի թահրով անենք...

ՌԱՖ. Մի թահրով անենք... Ձանդ դող ընկաւ հա՛: Մենք ձեզ ցոյց կը տանք... Աւազակներ...

ՍԱՐ. Եադ խօս չենք, փառք Աստուծու, որ ուզենանք՝ բանը տնավարի կը դըստենք...

ՌԱՖ. Ժէշտ... Հիմա մի կողպէլ էլ չենք տայ... Գնա, դնա այստեղից. ինչո՞ւ եկար: Գնա քո Առուշանի մօտ... Գիշերս վահանենց տանը քնեց, վախեցաւ հա՛, որ այստեղ չը մնաց... Ինչո՞ւ չի՞ գալիս, որ փողերը նազդ-նազդ ստանայ ու հայրա անի արտասահման... Չլինի՞ ուզում է, որ մարդիկ ուղարկենք յետևից, աղաչանք անենք, որ մեր հօր խաթրը չկտորի, 20,000 ըուբլին վերցնի...

ՍԱՐ. Իմանում ես՝ Առուշանը հէնց էս ա համաձայն ա: Ասում ա՛՝ էղքան զարմաղալի գլուխ չունեմ. չեմ ուզում, ասում ա...

ՌԱՖ. Չի՛ ուզում: Չեմ ուզում, չեմ ուզում—Չէքս քցի... Չի՛ ուզում: 20,000 են տալիս ու չի՛ ուզում... օխայ՛:

ՍԱՐ. (Համբերահաս է լինում: Նայում է դռան նեղից):

**ՌԱՖ.** Կատուի դուռնչը մտին չհասաւ, տակն էսօր պատ է... Ձեր դնչերին էնպէս կը տանք որ... Ի՞նչ ես դուան ծակից թամաշա անում:

**ՍԱՐ.** Դուռը բաց արա, թէ բու Աստուածը սիրես. հօրդ հետ շատ հարկաւոր գործ ունեմ... (ձեղից նայելով) Փեսայ... ան փեսայ...

**ՌԱՖ.** Փեսայ... փեսայ-փեսայ փրտացնեմ... (շարունակութիւնը մտաւոր է): Փրտացնեմ... փրտացնեմ...

(Պետրոսը զարթնում է: Նստում է եւ աչքերը ներում: Հագում է):

**ՍԱՐ.** Ըհը՛, զարթնեց... Բաշխիքը դէսը տու...

**ՌԱՖ.** Ձի կարելի: Մանկէլը գայ՛ յետոյ... Այսօր հայրիկը բան էր գրում. գուցէ կտակ էր գրում: Թողնե՛ք, որ տանի ու յանձնե՛ք նօտարին: Պէտք է լաւ իմանանք՝ ինչ է գրել: Դրա համար էլ կողպել ենք, որ չփախչի:

**ՍԱՐ.** Ախր մեզք ա, ծեր մարդ ա... Հէնց ապրես, բաց արա... (բարձր) Փէսայ. վե՛ր ես կենում, փեսայ... (Ռաֆայիին) Արա, դէ գժութին մի անի, բաց արա պրծի. . (աւելի ու աւելի անհանգստանում է):

**ՌԱՖ.** (Պառկում է դիվանի վրայ եւ ոտները կոպսօրեմ վեր ցցում: Շուտացնում է):

**ՊԵՏ.** (Ուշադրութիւն է դարձնում աղմուկի վրայ: Ծոցից բուլք է հանում, նայում է նորից տեղը դնում: Ոտի է կրնում: Կոնկում է սիւրտուկը):

**ՍԱՐ.** Բաց արա, հօրդ տեսնեմ, էլ եղ կոխպի... Էն ա վեր կացաւ. թո՛ղ արա դուս գայ. կատրօմնե՛ք ա... (բարձր) վե՛ր կացար, փեսայ... (հրում է դուռը):

**ՊԵՏ.** (Առաջ է գալիս, յօրանջելով): Ո՞վ է այդպեղ... (Ուզում է բանալ դուռը):

**ՍԱՐ.** Ես եմ, փեսայ, Սարիբէգն եմ... (Դեպի Ռաֆայիկը, ցածր) Բաշխիքը, բաշխիքը... չիմանայ, որ դուռը վրէն կողպել էք. սիրտը ցաւ կը տայ:

**ՌԱՖ.** (Ուշադրութիւն չի դարձնում):

**ՊԵՏ.** Դուռը... փակ է... (Կրկին փորձում է բանալ):  
**Ո՞վ** կայ այդպեղ:

**ՍԱՐ.** Էս ա բաց եմ անում... Բաշխիքը վէր ա ընգել. կայ, ման գամ գթնեմ... (Ռաֆայիին) Դէ ջնալ...

**ՌԱՖ.** Չհալա մի տանի: Չեմ բաց անի... (Հեռանում է դիվանից: Բարձր) Դուռը կողպած է, հայրիկ. Մանկէլն է հրամայել...

**ՊԵՏ.** (Ապշուած) Դժուար...

**ՌԱՖ.** Հիմա կը գայ՛ բաց կանեմ...

**ՊԵՏ.** (Բռնկում է) Բնց արէք:

**ՌԱՖ.** Մանկէլը շուտով կը գայ, նա խնքը...

**ՊԵՏ.** (Յնցում է դուռը) Բնց արէք...

**ՍԱՐ.** (Ռաֆայիին) Տեսնում ես՝ կէծանում ա — ալլա — հա բնի, բաց արա...

**ՌԱՖ.** (Տեսնում է):

**ՊԵՏ.** (Խիս վրդովւած) Բնց արէք դուռը...

**ՌԱՖ.** Ես մեղաւոր չեմ, հայրիկ... (Չեղք գրպանն է սանում):

**ՍԱՐ.** Հանի, հանի... (Խլում է բանալին Ռաֆայիի ձեռքից և հետիտել դուռը բաց անում): Էս ա բաց ըլաւ, էս ա բաց ըլաւ... (Իրան ձգում է ներս, դուռը յետեից փակում, կոնակը դեմ տալիս դուռն: Ներկայով է բռնում):

**ՊԵՏ.** (Յետ-յետ է փառում):

**ՌԱՖ.** (Մնացել է անհարակ կանգնած):

**ՍԱՐ.** (Շտապ) Փեսայ, էդ քսան հազարը բեկ մայ... ինձ մենակ մի հինգ հազար մանէթի վէքսիլ տու... թէ չէ՛ խաթալու բան ա էրեւում քու քսան հազարի բանը... տղէրքը թողնում չեն... ազվակատներ են բռնում... Ախպէր չեմ ուզում, թող քիչ ըլի — նազը ըլի... (Ծոցից մուրհակի բլրակն է հանում): Վէքսիլի թուղթն էլ հետս բերել եմ. ձեռաց գրի, պրծնի — գնայ...

**ՊԵՏ.** Ես արդէն կազմել եմ կտակա... և իմ կամքն արտայայտել եմ այս թղթի մէջ: (Հանում է ծոցի բուլքը):

**ՍԱՐ.** (Աչքերը վառում են): Առուշե՛ք վրայ ես գրուտա հաստատել...

ՊԵՏ. Այո:

ՍԱՐ. Ինձ տու պահեմ... Ես լաւ կը պահեմ...

ՊԵՏ. (Թուղքը ծոցն է դնում):

ՍԱՐ. (Շնչապառուած) Ի՞նչ դայդի ես գրեմ... Բեր, մի տեսնեմ, քեզ ըլի, խլում չեմ...

ՊԵՏ. Որքան կամենան տրտնջան զաւակներս. չեմ գիշի... (յուզմուկեր դեռ չի անցնում):

ՍԱՐ. Լաւ, էդ էլ քեզ—ինձ վէքսիլ տու, վէքսիլ...

ՊԵՏ. (Չուր է խմում: Դողում է):

(Դրսից գալիս են Եղիաբեքն ու Առուշանը):

ԵՂԻՍ. (Դեպի լեռ խօսելով): Արի, որդի, էլի քու տունն է՞ ինչ էլ չլինի: Արի... Քեզ գիպչող չկայ: (Վերցնում է վրայից քիկնոցը, փակում է բաղդադիւն: Շոգել է սասիկ): Ինքդ քո բերանով ասա, որ լաւ իմանայ... (Ռաճայելին) Հէրդ հալա չի՞ գարթնել:

ՌԱՃ. Ինձ հանգիստ թողէք, ես ոչինչ չգիտեմ, զաւմաղաչների գլուխ չունեմ... (Առուշանին) Ինչի՞ համար ես եկել:

ԵՂԻՍ. Շատ լաւ բանի համար է եկել: Չէր գալիս, զօնով եմ բերել... Նստի, Առուշ ջան, տեսնեմ՝ քեռիդ ի՞նչ բանի է: (Դուռը հրում է):

ՍԱՐ. (Դունից կողմ փաշտելով, ցածր): Չարդ արա, գրի...

ԵՂԻՍ. (Ներս նայելով) Պետրոս... (Ջարմացած) Սարի-րէզ, դու էստե՞րդ ես:

ՍԱՐ. (Անխորհրտ է ձեռնում): Հա... էկայ, որ... (Խօսքը կտուրը ձգելով) Դէ որ բանը էդպէս ա, փեսայ, Նահայի կասեմ՝ երկու—երեք օր էլ սպասի... (Հազում է):

ԵՂԻՍ. (Մանեակալի կողմը նայելով, Պետրոսին) էլի էնպէս բաց-բաց բնել ես. մեղայ քեզ Աստուած... Էրէսդ ինչո՞ւ էդպէս մի ուրիշ տեսակ է... Հիմա քոց ես գլում քեզ տարութիւն խօս չունես (Շօտփում է ձեռքը):

ՊԵՏ. Ոչինչ, լաւ է...

ԵՂԻՍ. (Անկողիներ խնամով կարգի է բերում): Հազար ասում եմ՝ բաց-բաց մի քնի, բաց-բաց մի քնի...

ՍԱՐ. (Պետրոսին ձեռնով նշան է անում, որ գրի):

ՊԵՏ. (Լուռ նստել է: Ներքին պայտաւի մէջ է):

ՌԱՃ. (Հեզմօրէն դիտում է Առուշանին):

ԱՌՈՒՇ. (Սպասում է, որ նա՛ խօսի առաջինը):

(Տեսարան)

ԵՂԻՍ. (Բարձր) Առուշ ջան, ներս արի:

ՍԱՐ. Առուշը... (Շտապով նայում է) Այ տղայ, էստե՞րդ ես...

ԵՂԻՍ. Ներս արի. քեռիդ գարթուն է... Մի քաշի, որդի ջան...

ՍԱՐ. Խի՞ ես եկել... (Անխորժ նախազգացումով) բան կայ...

ԵՂԻՍ. (Բռնում է Առուշանի ձեռքից և հետը սանում): Պետրոս, հեռը խօսի, տես. հարցրու... Ռաճայէլ, դու էլ արի...

ՌԱՃ. (Ուշադրութիւն չի դարձնում: Հայելին ձեռքին, մկրտով շիտկում է յօնիերի արանքը):

ԵՂԻՍ. Իբրան էլ ասա, Առուշ ջան: Պետրոս, լաւ անգամ դի. փողերը սրա որ տալիս ես, հալա մի իմացի՛ ինքը ուզում է:

ԱՌՈՒՇ. Քեռի, ես եկայ յայտնելու ձեզ... շատ կարեւոր է... Երկար մտածեցի... այնպէս որ, ես հրաժարում եմ ժառանգութիւնից...

ՍԱՐ. Դրուստ-գրուստ սարսաղե՞լ ես...

ԱՌՈՒՇ ...Ինձ համար ծանր կը լինի... Ես ձեր տանը մեծացել եմ՝ Մանէլի և Ռաճայէլի հետ միասին: Նըրանք զրկւում են... համաձայն չեն, բողոքում են... ինչո՞ւ դուր պղտորել մեր յարաբերութիւնները...

ՍԱՐ. Ինչե՞ր ես գուս տալիս... (Պետրոսին) Սրան լսես ոչ... ինձ ապէկոն արա, ապէկոն...

ԱՌՈՒՇ. (Վնակակցօրէն) Կրկնում եմ, քեռի, ես հրաժարում եմ այդ ժառանգութիւնից... քանի որ անախորժութիւններ են ստեղծւում ուրիշների համար...

ՊԵՏ. Դու կարծում ես՝ ես քեզ խարձում եմ:

ԱՌՈՒՇ. Ոչ, քեռի...

**ՊԵՏ.** Չեմ խարում... և ոչ ոք իրաւունք չունի բռնա-  
նալու քեզ վրայ... Դու երկխոս ես կրում...

**ԱՌՈՒՇ.** Այդ չէ պատճառը, բեռի...

**ՊԵՏ.** Այդ է, այդ է... Բայց իմ վճիռը վճիռ է...

**ԵՂԻՍ.** Այ մարդ, զօռնիդ ես ապրիս, չի ուզում—էլ ի՞նչ  
ես ստիպում:

**ՊԵՏ.** (Ընդուննապես) Մի խառնէք իմ գործերի մէջ...

**ՍՍՐ.** (Առուշանին, ցածր) Սարսաղ-սարսաղ մի խօսի.  
Երկաթը տար-տար ձեծի. վերջը գլխիդ վրայ կը տաս...  
(Բարձր) Ուզում աս, փեսայ, ուզում աս... բեր, բեր...

**ԵՂԻՍ.** Չի ուզում, չի ուզում... Սարիբէդ, թէ մեր  
հօր գերեզմանը կը սիրես՝ զէնը կաց:

**ՊԵՏ.** Առուշան մի վախենայ, ես ամեն ինչ կարգա-  
ցրել եմ...

**ԱՌՈՒՇ.** Քեռի... (Վոկորդը արևում է):

**ԵՂԻՍ.** Ձի ուզում, չի ուզում... Էլի ասա, Առուշ, էլի  
ասա...

**ԱՌՈՒՇ.** Աւելի լաւ է չգնամ համարարան, քան թէ  
մենք թշնամանանք... Չեմ կարող վերցնել, բեռի...

**ՍՍՐ.** (Բարկացած, Առուշանին) Չէնդ կտրի, հայվան  
հայվանի տղայ... Ասա՛ վերցնում եմ...

(Չայներն իրար են խտնում: Աղմուկ է բարձրանում):  
(Իրսից գալիս է Մանէլը):

**ՌԱՖ.** (Ընդառաջ գնալով) Ի՞նչ խարար...

**ՄԱՆ.** (Մոտայլած է: Գլխարկը մի կողմ է ձգում):

**ՌԱՖ.** Առուշն այստեղ է...

**ՄԱՆ.** (Ուշադրութիւն է դարձնում աղմուկի վրայ):

**ՌԱՖ.** Սարիբէդ-քեռին էլ բան են փոփոտում:

**ՄԱՆ.** Էնպէս փոփոսոցնեմ երկուսին էլ, որ ամպի գո-  
ոսցն էլ չլսեն... Ո՞վ բաց արեց դուռը: Ի՞ վախկոտ... (Ձեռ-  
քի ուժգին հարւածով բաց է անում ՊԵՏՐՈՍի սենեակի դուռը):

**ՍՍՐ.** (Երկիւղից լիս է բնկրկում):

**ՊԵՏ.** (Շփոթում է):

**ԵՂԻՍ.** Լաւ ժամանակին ես գալիս, Մանէլ: Առուշը...  
հէրդ...

**ՄԱՆ.** (Սարիբէդին և Առուշանին) Ի՞նչ էք էստեղ  
խցկւել: Դուքս եկէք:

**ՌԱՖ.** (Առաջ է եկել): Տոպրակներ են բերել հեռները,  
որ փողը տանէն... հա-հա-հա...

**ՄԱՆ.** Երկուսդ էլ, հէր ու որդի, դէ, փաստ-փուսէն  
քաշէք:

**ԵՂԻՍ.** Հալա կաց, Մանէլ, էստեղ ուրիշ բան կայ...

**ՄԱՆ.** (Չի լսում): Շո՛ւտ, շո՛ւտ, շո՛ւտ:

**ՌԱՖ.** (Նայում է չարախնդօրեմ):

**ԱՌՈՒՇ.** Մանէլ... Բարե, Մանէլ... (մեկնում է ձեռք):

**ՄՄՆ.** (Չեմ չի ալիս բժնամաբար դիտում է նրան ոտից  
գլուխ): Ասածու բարին... Քեզ հետ երկար-բարակ չեմ խօսի  
կտրիք այստեղից:

**ԱՌՈՒՇ.** (Մեղմ) Նախ պարզեմ... Հասկացիր... Հիմք  
չունես այդպէս վարելու...

**ՄԱՆ.** Շատ մի խօսի:

**ԱՌՈՒՇ.** (Լրջանում է): Եղիք քաղաքավարի: Եւ յետոյ  
բացատրիր պատճառը...

**ԵՂԻՍ.** Մանէլ...

**ՄԱՆ.** Պատճառ-մատճառ չեմ իմանում. քեզ ասում  
են՝ ուսգ եղիք մեր տանից:

**ԱՌՈՒՇ.** Այս տունը քեզ չէ պատկանում:

**ՄԱՆ.** Չես գնայ—վզակոթիդ տալով դուքս կքցեմ:

**ԱՌՈՒՇ.** Չափդ ճանաչիր... Մանէլ, իրաւունք չեմ  
տայ իմ պատւին դիպչելու...

**Ման.** Դու չհամարձակես փողերին դիպչել... Գլուխդ  
կը ջարդեմ:

**ՍՍՐ.** Ախպէր, իմ որդուց ի՞նչ էք ուզում... Մենք ի՞նչ  
մեղաւոր ենք...

**ՄԱՆ.** Կապանեմ, թէ որ վերցնես:

**ՍՍՐ.** (Սպրդնում է):

**ՄԱՆ.** Շանսատակ կանեմ:

**ԱՌՈՒՇ.** Դու չես համարձակիր...

**ՄԱՆ.** Ե՛ս... (Աչքերը փայտասակում են: Յուզմունքից մի  
վայրկեան չի կարողանում բան ասել):

ՍԱՐ. Փող չէ, խաթա դառաւ, Աստու պատիժ. Չենք  
ուզում ձեր փողը, դիժ էլ ձեզ ըլի... Փեսայ, դէ մի ձէն հանի է:  
ՄԱՆ. (Կասաղած) Վիզդ կը պոկեմ հաւի ճուտի պէս...

(Բռունցիով զարկում է Առուեանի կրծքին).  
ԱՌՌԻՇ Ի՞նչ ես խփում... Խուլիզան էքսպրոպրիա-  
տոր... (Բարձրացնում է արար՝ պաշտպանելու համար):

ՍԱՐ. (Աղաղակում է) Անաստւնձ... (Փորձում է արգելել):  
ԵՂԻՍ. (Բարձր) Մանէլ... ամա...  
ՄԱՆ. (Սարիքեզին մի կողմն է հրում, խլում է Առու-  
եանի ձեռքից արար, դէն շարժում եւ Առուեանին կրկին մի  
հանի անխնայ հարւածներ տալիս):

ԱՌՌԻՇ. (Ուշի է գալիս և քափով յետ հրում նրան ու  
պատրաստում ուժեղ դիմադրութեան: Գեմք արխնոտում է:  
ՍԱՐ. Չեր փողը դիժ ձեզ ըլի, իմ սրգուն մի սպանի...  
(Շարունակ միջանում է և շարունակ արաղակում):  
(Նդիսաբէրն ու Ռաֆայէլը մեծ ջանքերով յետ են պանում  
Մանէլին):

ՄԱՆ. (Կօշի արանքից հանում է ֆինկական դանակը  
և մերկացած վեր պանում): Կը մորթեմ...  
ԵՂԻՍ. (Սարսափահար) Մանէլ, Մանէլ, դանակը տե-  
ղը դեր...  
ՌԱՅ. (Իանակը խլում է ու բազցնում):  
ՍԱՐ. Որդուս սպանեցիք... Փեսայ, իմ տունը խի ես  
քանդում, տունդ Աստուած քանդի... (Թափահարում է Պե-  
տրոսին): Խի ես պանպանձել...

ԵՂԻՍ. Վոյ քոտանայ հօրքերդ... Ծնկները քակելով  
մօտեցնում է Առուեանին, որի դեմքից արիւնը շարունակ հոսում է):  
Իանակով խփեց... Որտեղի՞դ խփեց, Առու ջան...  
ՌԱՅ. Իանակով չի խփել, չէ... (Թաշկինակով փորձում  
է դադարեցնել արիւնը):

ՄԱՆ. (Հեւալով) Ինձ դոչի Մանէլ կասն...  
ԵՂԻՍ. Առու ջան, քեզ մատաղ, արի էրեւոյ ստոր ջրով  
լանամ... (Մանէլին) Բա Աստուած չունես, էպէս կը խփես  
էրեսին... Հայտ մի իմացի բանը, վերջը կուբ...  
ՊԵՏ. (Մինչ այդ վայրկեանը նա լարւած հետեւել է: Դո-

ղում է): Այս ի՞նչ արիւր...

ՍԱՐ. (Պետրոսին) Բա ես քեզ ի՞նչ էի արել, որ էս օյի-  
նը գրուես բերիք... Տճնոյ Աստուած քանդի... (Նդիսաբէրի  
հետ միասին Առուեանին ստնում են խոհանոց):

ՊԵՏ. Մանէլ... ի՞նչ ես անում...  
ՄԱՆ. Կտակը տուր այստեղ... Հանիր: Իսկոյն: (Նրկու  
հայ առաջ է գնում: Սպառնալից) Տուր... Այն ի՞նչ գրեցիր  
այսօր...

ՊԵՏ. Հեռացիր իմ տանից...  
ՄԱՆ. Կտակը, կտակը... գրել ես, գրել ես...  
ՊԵՏ. Ես քեզ հրամայում եմ...  
ՄԱՆ. Իմ հրամանը սո՛ւ է... (Իրպանից ասեմանակ է  
հանում): Պատուիր կտակը... Ասո՛ւ, որ քո ժառանգներն ես  
ու Ռաֆայէլն ենք... (Ասեմանակն ուղղում է դեպի Պետրոս):  
ՌԱՅ. Գժէլ ես, Մանէլ... Հայրիկ, դուրս գնա...  
(Սարսափահար է եղել):

ՊԵՏ. Հօր դէմ... (Ուղղելով) Չարկ... բայց չեմ զիջի...  
Ո՛չ... (Նետրոյալին ցնցում: Տասանում է եւ դեպի կողմ բե-  
ւում):  
ՌԱՅ. (ձյում է) Հայրիկ... (վազում է դեպի Պետրոս):  
ՄԱՆ. (Չեմք վայր է իջեցնում):  
ԵՂԻՍ. (Շտապով գալիս է): Ի՞նչ պատահեց... Պետրոս...  
(Իրկում է Պետրոսին): Պետրոս ջան...  
ՌԱՅ. Մի վախենայ, հայրիկ... Մանէլը չի անի...  
ՊԵՏ. (Մեծ դժարութեամբ կարողանում է կանգնած մը-  
նալ: Նդիսաբէրն ու Ռաֆայէլը օգնում են նրան):  
ՄԱՆ. (Յուզած, միւս սենեակն է անցնում): Խոհանո-  
ցից գալիս են Սարիքեզն ու Առուեանը. վերջինս բաշկինա-  
կով կապել է երեսը):

ՍԱՐ. (Շտապելով) Գնանք էստեղից, քեզ էլ ինձ էլ՝  
կը սպանեն... (Ծածկում է զլխարկը) Ո՛ւր ա փափազդ...  
Գնանք, որդի...  
(Առուեանն ու Սարիքեզը դուրս են գնում):

Գ. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Պետրոսը պատկած է անկողնում: Կիսաքուն զրույթեան մէջ է: Դէմքը գունատ է: Նրա մօտ կանգնած է Եղիսարէթը՝ վշտից կծկւած, ուժասպառ: Գրասեղանի առաջ նստած է Բժիշկը. բան է գրում մտածելով: Նրա զանազան կողմերում կանգնած են Ռաֆայէլն ու Մանուէլը: Սպասում են: Կէս զիշեր է:

Բժիշկը—(Բաւական ժամանակ գրում է):

(Լուսփուն)

ԵղիՍ. (Հառաչում է):

Բժիշկը (վերջացնում է գրելը): Այս զեղերը կառնէք... Երեք տեսակ զեղ եմ նշանակել: Մէկը սպիտակ հեղուկ կը լինի՝ փոքրիկ ամանով (մատնեով ցոյց է ցալիս չափը): Օրը երեք անգամ, միշտ ուտելուց առաջ, ամեն անգամ 15 կաթիլ կը կաթեցնէք ուրեմկայի մէջ... Յետոյ, այս միւսը, որ նոյնպէս հեղուկ է... կը խմացնէք ամեն երկու ժամը մի սեղանի զգալ լիքը: Իսկ այս հաբերը՝ մի հատ առաւօտեան, մի հատ երեկոյեան... (վեր է կենում): Հա, չմոռանամ ասել, որ սրտի կողմը... անա այստեղ (ցոյց է ցալիս իր կրծքի ձախ կողմը) սառոյց կը դնէք: Կը մանրացնէք, տալրակի մէջը կածէք ու կը դնէք անա այստեղ: Հասկանալի է: Յատուկ տալրակներ կան, զեղասաներում ծախում են: Մի հատ կանոն էք և սառոյցը մէջը կածէք: Հասկանալի է: Իսկ ամենագլխաւորը՝ ոչ մի յուզում չպաւճառէք հիւանդին... Յտեսութիւն ձեզ... (Միւս սենեակն է անցնում): Ռաֆայիլն ու Մանուէլը հետեւում են նրան: Եղիսարէթը մնում է հիւանդի մօտ):

ՌԱՅ. Խնդրում եմ, պարոն բժիշկ, ճիշտն ասացէ՞ր՝ շնտ է վտանգաւոր:

ԲժՇ. Հոգեկան ցնցումը շատ ուժեղ է եղել... Նեարդերը խանգարւել են... Դժւարանում եմ առայժմ վերջնական կարծիք յայտնել... Յամենայն դէպս, շտապեցէք այդ զեղերը առնել և անմիջապէս խմացրէք:

ՄԱՆ. Բժիշկ, զէ ուղիղն ասէք էլի—երեսից երևում է, որ չի ապրի:

ԲժՇ. (Ուսերը վեր է քաշում): Ներեցէք... Երեկոյեան կը գամ կրկին: Իսկ եթէ հարկաւոր համարէք՝ անմիջապէս խմաց տւէք... Յտեսութիւն:

ՄԱՆ. (Իրպանից փող է հանում): Շատ բարի: (Բծրկլին հանապարհ է դնում):

ՊԵՏ. (Աչքերը բաց է անում):

ԵղիՍ. (Զգոյց) Ո՞նց ես զգում քեզ, Պետրոս ջան:

ՊԵՏ. (Զի պատասխանում):

ԵղիՍ. Բժիշկը ասում է, որ մի շաբաթից յետոյ բոլորովին առողջ կը լինես: Ասում է՝ ոչինչ չկայ, դատարկ բան է...

ՌԱՅ. (Յեռ է եկել) Մի վախենայ, հայրիկ, վտանգաւոր բան չի:

ԵղիՍ. Մինչև էքուց առաւօտ ամեն բան կանցնի... (Երեսը շուռ է ցալիս՝ արտասուքը ծածկելու համար):

ՊԵՏ. (Նորից փակում է աչքերը):

ԵղիՍ. Զի ապրի, չի ապրի... (Հեկեկում է):

ՌԱՅ. Մայրիկ, բաւական է... հայրիկը պէտք է հանգստանայ... Գնանք այն սենեակը...

ԵղիՍ. (Գնալով) Հօրդ ախպէրը գեօրէ՛-գեօր ըլէ՛ր՝ էն անի՛ծած փողերը ջուրը քցէ՛ր, հօրդ չ'թողէ՛ր... (Միւս սենեակը մտնելով, քակում է ձնկները):

ՄԱՆԻՒՆԷՆԷ (Յեռ է գալիս: Իրսի դուռը փակում է խնամփով: Մռայլած է):

ԵղիՍ. (Նստում է: Մանուէլին) Բժիշկը էլի բան ասեց քեզ զրոտմ:

ՄԱՆ. (Զի պատասխանում: ծխախոտ է վառում):

ԵՂԻՄ. Ուրիշ ի՞նչ ասեց բժիշկը: (Շարունակում է ար-  
տասել):

ՄԱՆ. Հարկաւոր է հիմիկանից պատրաստութիւն  
տեսնել:

ՌԱՅ. (Ահով) Բժիշկն ասեց...

ԵՂԻՄ. Վայ իմ գլխին. էքուց-մէկ էլ օր պէտք է սևեր  
հարնեմ ու նստե՞մ... (Կրկին քակում է ձկնկներ):

ՌԱՅ. Ուրեմն բժիշկը...

ՄԱՆ. Ի՞նչ բժիշկ. հինգ տարեկան երեխայ բերես դի-  
մացը կանգնացնես՝ կասի էլի... Ձեռ տեսնում: (Նդիսաբեքին)  
Լաւ, լաւ, ի սէրն Աստուծոյ, հազար տարի խօս՝ չէ՞ր ապ-  
րելու:

ՌԱՅ. (Աննարակ) Ախ ես չգիտեմ, ես չգիտեմ... Ոչինչ  
չեմ կարողանում հասկանալ...

ՄԱՆ. (Ներորդ ծխախոտն է վառում. առաջինը արդէն  
ծխել—վերջացրել է): Քո բաժին տասը հազարի երեսը չես  
տեսնի՛ այն ժամանակ կը հասկանաս ամեն բան: (Նստում  
է պատուհանի մօտ: Նրա ներսում կրակ է մխում):

ՌԱՅ. (Աւստում է մտածել):

ԵՂԻՄ. (Նստել է քախի վրայ: Տխուր-տխուր շարժում  
է գլուխը):

(Պակեր):

ՌԱՅ. Ասա էլի, Մանէլ, ինչ ասեց ազվակատը: Ես էլ  
բմանամ...

ՄԱՆ. Ինչ պէտք է ասի... (Արհամարհանելով) Քանի  
որ խելքը գլխին է, առողջ է՝ ոչինչ չի կարելի անել:

ՌԱՅ. Ուրեմն ոչ մի յոյս չկայ, որ արգելենք...

ՄԱՆ. (Գրգռւած) Դուք էլ՝ ազվակատ հա՛ ազվակատ...  
Ձեր խելքով ընդայ ու գնացի: Այստեղ ազվակատը ինչ  
գործ ունի:

ՌԱՅ. Ախր մեր հայրը օրէնքի զօրութեամբ...

ՄԱՆ. Օրէնք-մօրէնք չեմ իմանում... (Բարձրացնում է  
բառուցքը) Այ իմ օրէնքը... Այդ քսան հազարը մերն է,

տասը՝ իմը, տասը՝ քոնը: Թէ վախենում ես, քո փայն էլ  
ես կը վերցնեմ:

ՌԱՅ. (Թեթեւ դիպած) Ձէ, ես էլ իմ բաժինն եմ ու-  
ղում...

ԵՂԻՄ. Սուս... սուս...

(Լռութիւն)

(Ժառանցոյցը շատ դանդաղ և դժարութեամբ զարկում է  
սասներկու անգամ):

ՊԵՏ. (Սրափում է: Բարձրացնում է գլուխը և մեծ նի-  
գերով յեկում է քեից: Լուռ ականջ է դնում):

ՄԱՆ. (Ընդհանուր լուրքեան մեջ, յանկարծ ինքն իրան  
բռնկում է: Զայրացած քնում է):

ԵՂԻՄ. Որդի ջան, արիւնդ շատ մի պղտորի, մերն էլ  
ես պղտորում...

ՌԱՅ. Հիմա ժամանակը չէ, Մանէլ. տեսնում ես՝  
հայրիկը ինչ դրութեան մէջ է:

ՄԱՆ. Մեր դրութիւնն աւելի վատ է: Սա վաղը կամ  
միւս օրը կը մեռնի ու բոլոր փողերը այն լակոտին պէտք է  
անցնեն... (Չայնը բարձրացրել է):

ՌԱՅ. Բայց ախր, Մանէլ...

ԵՂԻՄ. Սուս... չգարթնի. հազիւ քնել է... (Մօտենում  
է դռան):

ՌԱՅ. (Չայնը իջեցնելով) Մանէլ...

ՄԱՆ. Դու էլ ինչ ես՝ Մանէլ հա՛ Մանէլ... խելքի  
արի. կեանքի ու մահան խնդիր է: Դուք ինչ ուզում էք  
արէք: Ես յետ կանգնողը չեմ: (Մօտենում է միւս սենեակի  
դռան: Թեթեւակի ականջ է դնում):

ԵՂԻՄ. Հիւանդին չեն նեղացնի: Չէրդ է, խաթրը  
պէտք է պահես: Ախր ձեզ շատ է սիրում...

ՄԱՆ. Սիրէլս որն է: Թող այսքան էլ (ցոյց է ցալիս  
ցուցամաշի ծայրը) չսիրէր, միայն թէ փողը մեզ կտակէր...  
(քեֆ է բնկնում դիվանի վրայ): Սիրում է... Ապրելու համար  
փողն է հարկաւոր և ոչ թէ սիրելը: (Հանում է ծխախոտի  
սուփը, որը դասարկել է): Համ էլ, թէ որ սիրում է՝ էլ

ինչո՞ւ մեզ զրկում է ժառանգութիւնից: (Ռաֆայէլին) Գնա  
ինձ համար մի պաշկա պապիրոս առ: (Փող է հանում):

ՌԱՅ. (Արժանապատուութիւնը պահպանելու ցանկութեամբ)  
Ինքդ բեր...

ՄԱՆ. (Հանգիստ, բայց հրաձայողաբար) Գնա բեր: (Մե-  
կնում է դրամք):

ՌԱՅ. (Անձնատուր լինելով) Ամենքին ծառայ ես դար-  
ձնում... (Վերցնում է փողը և գնում):

ԵՂԻՍ. (Մտազբաղել է):

ՊԵՏ. Եղիսարէթ... Եղի-սա-բէթ...  
ՄԱՆ. (Եղիսարէթին, որը չի լսել ձայնը) Կանչում է...

Մարդդ կանչում է...  
ՊԵՏ. Եղի-սա-բէթ...  
ՄԱՆ. Չէս լսում...

ԵՂԻՍ. Չարթիւնէց... (Աչքերը չարացնում է; ուղղում և  
շտապով անցնում Պետրոսի սենեակը):

ՄԱՆ. (Անհանգստութիւնից մերթ հետո, մերթ փայլում է):

ԵՂԻՍ. Ի՞նչ է, Պետրոս ջան... (Մտնում է մահնա-  
կալին):

ՊԵՏ. (Բռնում է նրա ձեռքը և նստում անկողնի վրայ):

ԵՂԻՍ. (Նստում է կողքին): Վախ չկայ, Պետրոս ջան...  
Բժիշկը ասեց՝ թեթեւ բան է... Այ, արդէն կարողանում ես  
նստել...

ՊԵՏ. Սիրտս է, Եղիսարէթ, ցաւում է...

ԵՂԻՍ. (Վշտակցութեամբ) Դու մեր ամենի սիրտն էլ  
հարա արիր, Պետրոս, հարա-հարա դառնայ մեր դուշմանի  
հոգին...

ՊԵՏ. Կը մեռնեմ, Եղիսարէթ .. զգում եմ...

ԵՂԻՍ. Մեռնելուց մի խօսի, Պետրոս ջան... Հայր էն-  
քան ապրի, որ քեզ հետ մէկտեղ արժանանամ Մանէլի ու  
Ռաֆայէլի թագ ու պսակին... Տեսնենք ու մի տարում էլ  
մեռնենք:

ՊԵՏ. Այս գիշեր... ծանր է... զգում եմ... ես մենակ  
եմ, օգնիր ինձ .. Գոնէ դ՞ու հաակացիր, Եղիսարէթ... Բո  
սիրտը ոսկի է... Մենակ եմ... Վախենում եմ...

ԵՂԻՍ. Ատածուց վախեցիր... Ասուած ամենը տեսնում  
է: Հէք ու որդիք՝ նա է սահմանել... Էլ էն բանը մի անի,  
Պետրոս... Էդ կտակը պատուի, պատուի... (Արտասում է):

ՊԵՏ. (Մեկնաբար սզմում է կուրծքը, որտեղ պահել է  
բուլբուլը):

(Լուռփակ):

(Ռաֆայէլը վերադառնում է):

ՄԱՆ. (Անհամբեր մեկնում է ձեռք):

ՌԱՅ. (Անհամարձակ) Չկայ... Դուքանը կողպած էր...

ՄԱՆ. Ուրիշ տեղ կը գնայիր:

ՌԱՅ. Ախր...

ՄԱՆ. Յետ գնա: Բազարում դուքանները բաց կը լի-  
նեն: Գնա:

ՌԱՅ. Հեռու է... Այս կէս գիշերի՞ն... Ուշ... (Արտասւած  
դուռն է գնում):

ՄԱՆ. (Շարունակում է լուռ փայլել):

ԵՂԻՍ. Պետրոս... Քեզանից ոչ մի օր մի թթու խօսք  
չեմ լսած: Ինչու ես հիմա ուզում, որ ջանս ծակծկես, ջիզա-  
րս դադես... Մեզք ենք, Պետրոս, մեզք ենք... Մի անի՛ էդ  
բանը... Կտակը փոխիր: Էդ զրածովդ մեր տունը զըլ-  
խներին փուլ կածես: Ամեն մարդ առաջ իրա մասին, իրա  
ընտանիքի մասին պէտք է մտածի: Աշխհարս էսպէս է,  
Պետրոս ջան, բա միսը ջանիցը պոկել կը լինի՞...

ՊԵՏ. Տանջում ես, Եղիսարէթ... Ծանր է... Ես մենակ  
եմ... Այս գիշեր քեզ պարտաւորեցնում եմ... Սըրբութեամբ  
պահիր այս թուղթը... Եթէ մեռնեմ այս գիշեր...

ԵՂԻՍ. Էդ թուղթը չեմ վերցնի... Պատուի... (Յուզւած)  
Ոտներդ եմ ընկնում... (Չազում է առաջը): Իմ որդկերանց  
մի զրկի, մի զրկի... Տկլոր կը մնան, քաղցած-ծարաւ դռնէ  
դուռ կընկեն... Կը հիւանդանան... Դրա համար եմ իմ  
որդկերանց մեծացրել...

ՊԵՏ. Մի տանջի...

ԵՂԻՍ. Բոտանան աչքերս՝ նրանց էդ օրում չտեսնեմ...  
Հիմիկանից թաղիր ինձ, որ չտեսնեմ... (Հեկեկում է):

ՊԵՏ. (Արտասուում է):

ԵՂԻՍ. Ուրիշ կտակ գրի, էդ պատար... Փոխի, Պետրոս...  
Ի՞նչնձ սեմ յոյսով ես թողնում. սեմ տուն գնամ ու ձեռքս  
էրկարացնելով՝ մի կտոր հաց ուղեմ, աղքատի պէս...

ՊԵՏ. (Երեւումն ձայնով) Քո մասին ես մտածել եմ,  
Եղիսարէթ... Ինչպէս կարող էի քեզ մոռանալ... Դու սպա-  
հոված կը լինես. դու չես մտերայ: Այդ խայտառակութիւնից  
ես կը խելագարուէի... Մի կասկածի այդ մասին...

ԵՂԻՍ. Առաջ իմ որդկերանց, առաջ իմ որդկերանց...  
Ես աղքատութիւն էլ կանեմ, միայն թէ որդիքս լաւ սպ-  
րեն, նեղութիւն չքաշեն իրանց կեանքում... (Ձեռքերը սա-  
րածում, պաղատագիրն) Պետրոս...

ՊԵՏ. (Դողդողում է: Մեքերը խուլել է և գլխում):

ԵՂԻՍ. Միտքդ է՝ ինչպէս ուրախացար, Երբ Մանէլը  
ծնւեց... մեծացաւ... ուսումնարան գնաց... Միտքդ է՝ երբ  
Ռաֆայէլը հիւանդացաւ տիֆով... Եթէր տարեկան էր... Դու  
գիշերները չէիր քնում... Աղի արաստունք էիր թափում...  
Չոքեցիր բժշկի առաջ, ոտները համբուրեցիր, որ փրկի քո  
երեխային... Կեանքդ կը տայիր... Հիմա Բնչ պատահեց, որ  
փողն էլ ես խնայում... Ո՞վ գեղեց քեզ, Պետրոս. սի  
զժւացրեց... Մեր էրծաթի փսակը սկսեցնում ես, սի սկանայ  
որդկերանցս արևը...

ՊԵՏ. (Խորը յուզել է: Անհաստատ ձայնով) Եղիսարէթ,  
այդպէս մի խօսի... (Մեծ դժուարութեամբ ոտի է կանգնում):  
Եղիսարէթ...

ԵՂԻՍ. (Գլուխը չի բարձրացնում: Կեկեկում է խսերի-  
ֆաբար):

ՊԵՏ. (Թուրքը դողդողումն ձեռքերով բռնած) Եղիսարէթ...  
(Յուսահասական ձայնով) Եղիսարէթ...

ԵՂԻՍ. Մեզ սաղ-սաղ մի թաղի... (ձչում է և փուռում  
յասակին ուժազնաց եղած):

ՄԱՆ. (ձչոցը լսելով, Բաց է անում դուռը):

ՊԵՏ. (Անգոր և աղեկորոյս, փորձում է բարձրացնել  
Եղիսարէթին):

ՄԱՆ. Մայրիկ... Զըր Բնչ պատահեց...



«ՆՈՐ ՀՈՍԱՆՔ»-Ի ԳՐԱԴԱՐԱՆ

№ 1	«Կիր» Լևոն Շանթ	20	կ.
№ 2	Շրջադիպակներ Ռէն	10	կ.
№ 4	Ժառանգութիւն Վ. Վալապեան	25	կ.
№ 5	Վարժունիւն Միք. Մանուէլեան	5	կ.
№ 6	Կրն Ռէն	10	կ.
№ 10	Գեպի Տիեզերք Դ. Գեորգիւն	10	կ.
№ 11	Հակասագիր Միք. Մանուէլեան	15	կ.

12747

2013

